ԺԲ. ՏԱՐԻ 3456 (Ն. Տ.) 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1895 21 ՕԳՈՍՏՈՍ 1895 13 ՌԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1313 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه غلطه ده آره ويلق غزته سى اداره سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ	150
»	» Վեցամսեայ	» »	75
»	» Եռամսեայ	» »	40
Օտար երկիրներէ	Տարեկան	ֆրանք	56
»	» Վեցամսեայ	»	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր.	Տարեկան	Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միասին		Ղրուշ	50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի դարձուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

ԵՐԷԿԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Հաւատացեալներու բազմութեան մէջ որ խռնուած էր երէկ Ս. Աստուածածնայ տաճարը, Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հօր Պատարագին ներկայ գտնուելու և հոգեշահ քարոզին ունկնդրելու, մաս մը կար, Թաղին վաղեմի բնակիչները, որոնք իրենց յիշողութեան մէջ կը կենդանացունէին աւելի քան քառորդ դար առաջուան այն Թուականը ուր Կապուտիկեան Սրբազանին հոգեւոր սանը եկեղեցական կարգ ու վարդապետական ձեռնադրութիւն կը ստանար այդ եկեղեցիին մէջ. Երիտասարդ հոգեւորականը որ իր ուսումը կատարած օրէն յարգելի ու սիրելի կը հանդիսանար բոլոր զինքը ճանչցողներուն, իր լուրջ ու պարզասէր բնաւորութեամբը, իր խոհուն միտքովը ու անկեղծ սիրտովը, քսանըեօթը տարի առաջ, Պատրիարքական աթոռը բարձրացած, երէկ վերստին կը գտնէր ինքզինքն այն խորանին առջեւ ուր սպասաւորած էր երբեմն իբրեւ սարկաւագ։

Սրբազանն անշուշտ հոգեկան յուզում մը զգաց այդ եկեղեցիին մէջ որ յիշատակներով լեցուն է իրեն համար, — յիշատակը պատկառելի եպիսկոպոսի մը ու ծերունազարդ աւագերէցի մը որոնք գերեզմանին խորը կը ննջեն խաղաղիկ. յիշատակը այն մեռած գացած Թաղեցիներուն որոնք բարի անուն մը թողած են ու իրենց կենդանութեանը այնքան հրճուանքով կը լսէին ու կը դիտէին յառաջացումն այն եկեղեցականին զոր պատանի ճանչցած էին իրենց գեղին մէջ. ու կենդանիներէն, երկու բարեկրօն քահանայներ, որոնք գուրգուրանքով խառն պատկառանքով մը կը շրջապատէին իրենց սիրեցեալ վարդապետը՝ այժմ Պատրիարք. հին Թաղեցիները, որոնք տեսակ մը հպարտութեամբ եկեղեցի կը վազէին, ու արդի սերունդը, տարեցներուն զգացման մասնակից՝ անսովոր խնդութեամբ կ'ողջունէին Ն. Սրբազնութեան այցելութիւնը։

Պէտք ունի՞նք աւելի մանրամասնելու Օրթագեղի ազգայիններուն անկեղծ ու սրտեռանդն համակրութեան արտայայտութիւններն երէկուան համախմբութեան ու պատարագին առթիւ։ Այդ զգայումը, որ ընդհանուր է, Օրթագեղի համար շեշտելը հաճելի պարտականութիւն մը կը սեպենք, վերաբերելու համար այն միջնավայրին ուր Տ. Մատթէոս Պատրիարք անցուցած է իր առաջին երիտասարդութիւնը և կատարած է իր եկեղեցական ուխտը։ Եւ առիթն է նաեւ շեշտելու թէ մենք ամենքս ալ գիտենք յարգել ու սիրել մեր հոգեւոր հայրերը, երբ կենդանի տիպար կը հանդիսանան անբասիր վարուց և արժանի իրենց եկեղեցական նուիրական կոչման. Թաղը որ հիւրընկալած է զանոնք այն Թուականին երբ անծանօթ էին տակաւին, կը պարծի անոնցմով. եկեղեցին, ուր մատուցած են իրենց անդրանիկ պատարագը, մեծաշուք հանդէսով կ'ընդունի զանոնք երբ կը վերադառնան հոն։

Եւ նոյն ատեն տրտմութեամբ կը համակուինք ի տես այն հոգեւորականներու որոնք եթէ իրենց հոգեւոր պաշտօնին վայել պատկառանքը կը գտնեն, իրենց բարոյական արժանեօք չեն համապատասխաներ անոր։ Այո՛, մեր ժողովուրդը գիտէ յարգել իր եկեղեցականները. որո՞ւնն է մեղքը, երբ երբեմն կը թերանայ այդ յարգանքին մէջ։

Ամեն անգամ որ բարձրաստիճան եկեղեցականէն սկսեալ մինչեւ պարզ քահանայ մը կը գտնան պատկառանք ազդել, հոգեւորականութեան նկատմամբ մեր բնածին հակումը այնպիսի անկեղծ կերպով ի յայտ կուգայ, որ լիովին կը հերքէ մեր ժողովրդեան կարծեցեալ կրօնական անտարբերութիւնը։ Տ.

ՀԱՅԵՐՆ Ց'ԱՒՍՏՐԱԼԻԱ

ԺԱ.

Ամբողջ երկու տարիներ Մելպուրնի երեկոյեան օրաթերթերէն Հէրըլտի մէջ բժշկական ազդարարութիւն մը կ'երեւէր որ հայու մը, մանաւանդ հայ բժշկի մը համար հետաքրքրաշարժ էր. հայու մը հնարած մէկ դեղին ծանուցումն էր որ այդ Թոնիքին առաւելութիւնները կը պատմէր, ապահովցնելով ընթերցողները թէ ասիական ցեղեր առանց այս դեղին չեն կարող լինիլ և դարուս առաջնակարգ դեղային գիւտերէն մին է, գին երկուքուկէս շիլին։ Անտարակոյս օտարութեան մէջ ընկնող իւրաքանչիւր ազգային տեսակ մը հպարտութիւն պիտի զգար ինձ նման կարդալով այս տողերն որով ուրախութեամբ կ'իմանայի թէ մենք ևս բժշկական և առողջաբանական նոր գիւտոց մէջ ձայն մ'ունինք։

Հետաքրքրութիւնս շարժեցաւ թէ ո՞վ կրնայ ըլլալ այս մեծանուն հայ բժիշկն. արդեօք Թուրքիայէ՞, Ռուսիայէ՞ թէ Պարսկաստանէ՞ հայ մ'էր այդ բաղդաւոր արարածը։ Շաբաթ երեկոյ մը մտադրեցի հետաքրքրութիւնս գոհացնել. ուստի ազդարարուած դեղին ծանուցատիրոջ երթալով ամեն ինչ կը հասկնամ։ Ինքն առաջնակարգ դեղագործ մը և բնալոյծ մ'էր և երդումներով կուզէր համոզել զիս որ դարուս ամենամեծ էլիքսիրն է։ Մինչ նա կը պերճաբանէր իր վաճառելի առարկան, միւս կողմանէ ես ալ կը ջանայի իմանալ հայ բժշկին անունը։ Դեղագործն խոկոյն պատմեց թէ Անգլիայէն, Մանչէսթըրէն կարծեմ, հայ յանձնակատար մը վաճառեց իրեն սոյն դեղերուն մենաշնորհը։ Չէր կարծեր որ նա լինէր բժիշկն ինքը, բայց անտարակոյս բժշկին խորհրդական յանձնակատարն էր որ աշխարհի չորս կողմը կը պտըտէր յաջողութեամբ և ազդարարութեամբք վաճառելու վերոյիշեալ Թոնիքը։ Սոյն հայ պարոնին անունն էր Սինանեան, Պ. Թովմասեան քիչ յետոյ կը հաստատէր այս լուրին ճշմարտութիւնը զի ինքն անձամբ տեսակցած էր սոյն պարոնին հետ։

Վերոգրեալ տեսարաններն հաւատարմաբար առանց խառնուրդի ընթերցողաց առաջ պարզելով, նպատակս ազգայնոց վաճառականական գործառնութիւնները վըհատեցնել չըլլալով, հապա մեր գործաւոր դասուն՝ պանդխտութեան մէջ պատահած մոլորեցիչ տեսարաններուն իրական պատճառներն ի յայտ բերել եղած է։ Աւստրալիոյ պէս ընդարձակածաւալ երկիր մը անշուշտ բարուք յարաբերութեան մէջ պիտի կրնայ մտնել Թուրքիոյ առեւտրական հրապարակին հետ, եթէ այդ առեւտրական ձեռնարկութիւնը Սուրբացւոց ձեռքը չի ձգուի որոնք չէնք չնորհք հագուելու ձեւը չեն գիտեր։ Մինչ մի կողմանէ կրնանք համարձակութեամբ ըսել թէ, մեր վաճառականական տուներ մէկ մ'ալ ուշադրութիւննին դէպի այս կողմն աշխարհի դարձնելով կրնան ճամբայ մը բանալ տաճկական ապրանաց ի Հարաւային Կիսագունտն ներմուծման, բայց տարակուսանօք կրնանք հաւատալ թէ անարուեստ, անփորձառու, անգլիերէն չի գիտցող և դրամագլուխ չունեցող երիտասարդներ կարենան գոհացուցիչ յաջողութիւն մը ձեռք բերել։

⁂

Պոլսեցի փափկակեաց երիտասարդք գուցէ մտածին թէ Եւրոպա, Ամերիկա, Աւստրալիա և այլ հեռաւոր տեղեր գաղթելը պիտի կրնայ իրենց բաղդին շրջանակը դարձնել, բայց մեծ մասամբ դէպի ձախ կողմն է որ այդ շրջանակը կը դառնայ, մանաւանդ երբ մարդ, արուեստ, դրամ, լեզու չունենայ։ Պանդխտութիւնը եթէ մեզմէ մէկ մասին երանութեան դըռնիր բացած է, մեծագոյն մասին ալ դժբախտութեան վիհը բացած է ուր միակ սխալ մը կը գահավիժէ մարդս մինչև թշուառութեան յատակը։ Պանդխտութեան պատուհասները բառնալու համար կա՛մ պէտք է պանդխտութիւնը աւելի դիւրըմբեր ընելու միջոցներու վրայ խորհելու խնդրոյն այժմէութիւն տալ և կա՛մ պանդխտութիւնը բոլորովին արմատախիլ ընելով դադրեցնել այն անձանց համար որոնք ո՛չ արուեստ ունին, ո՛չ դրամագլուխ, ո՛չ լեզու գիտեն, ո՛չ զօրաւոր են կոշտ աշխատութեանց ձեռնարկելու, վերջապէս անոնց որոնք օտարութեան հլլելը կը համարին տեսակ մը օդափոխութեան երթալ։

Օտարութեան կեանքի մը առաջին զգաշնութիւնը պէտք է ըլլալ կեղծ ու պատիր տարաձայնութեանց հաւատ չընծայել և լրագրական լուրերու դիւրաւ չի հաւանիլ։ Քիչ թէ շատ արուեստ մ'ունենալ, եւրոպական լեզուաց վրայ բաւական հմտութիւն. դրամը, կենաց այդ անմեկնելի անհրաժեշտութիւնը, այնչափ շատ ունենալ որչա՛փ կարելի է. բաւական տոկուն առողջութիւն ունենալ, և վերջապէս քաջութիւն մ'ունենալ օտարութեան մէջ անմեղ նորեկ պանդուխտները ծուղակը ձգող այն պչրանքներուն ու լպիրշ գեղխութիւններու դիմադրելու որոնք կեանքը կ'սպաննեն, արիւնը կը ցամքեցնեն, երիտասարդութեան կորովը մեռելութեան գոյնով կ'ուրուացնեն, և յոյսերն ալ սեւ ունայնութեանց մէջ կը լքեն։ Իրաւ է թէ մեր ազգը միւս ազգաց նման ճամբորդութիւն սիրող ու գաղթելու յարողներու կարգէն չէ, բայց վերջերս մեր արդի նորաբոյս սերունդը վէպեր, ճամբորդութիւններ, արկածներ կարդալով, նաև տարաձայնութիւններով լեցուելով սկսած է պանդխտութեան և հետեւաբար այսօր պատանի թէ երիտասարդ անյագ փափաք մ'ունին «դուրս երթալ» ուր կը բանդագուշեն գանձեր ժողվել, փայլուն, ճոխ ապագայ պատրաստել։ Իբրեւ փորձառու մի պանդուխտ նուիրական պարտականութիւն կը համարիմ ներկայ առթէն օգուտ քաղելով յիշեցնել այդ բաղդախնդիր պարոններու թէ «ամեն փայլուն առարկայ ոսկի չէ»։ Միակ դիւրախաբութիւն մը, միակ սխալ քայլ մը երբեմն ամբողջ կեանք մը կ'արժէ։ Աւելի լաւ է թռչուն մ'ի ձեռին քան թէ գոյգ մը ծառին վրայ. յաճախ հացի խնդիրը երեւակայական թռչունի մը տեղ դնելով ետեւէն կը վազենք կոյրակուրայն և փոսը կ'ընկնինք։ Կան արտասուալից մայրեր որոնք օրէ օր իրենց որդւոյն կ'սպասեն, կան սգաւոր կիներ որոնք ամեն գիշեր իրենց ամուսնոյն կ'սպասեն, կան չքաւոր ծերունի հայրեր, որոնք ալեւոր մազերով իրենց երիտասարդ որդւոյն կ'սպասեն որ նեցուկ մ'ունենան իրենց անձուկ օրերուն մէջ մինչ նոքա կամ Նիւ-Եորք, կա՛մ Մելպո՛ւրն, կա՛մ Ռումանիա, վերջապէս ո և է հեռաւոր քաղաք մը ընկած են չքաւորութեան, թըշուառութեան մէջ, և կամ սրճարանի մ'անկիւնը, վատահամբաւ տուն մը իրենց Թանկագին և դարունազարդ ժամանակը կ'անցունեն։

Մի՛ գուցէ պանդխտութեան մէջ գանձեր ձեռք ձգող, յաջողող, և հարստութիւն դիզող բաղդաւորներ յառեւտես մը համարին զիս և պանդխտութիւնը չի քաջալերելուս շատ չախորժին. բայց բացառութիւններն յարգելով հանդերձ՝ ներքին համոզմամբ մը կ'ըսեմ թէ Պոլսեցի կամ ո՛ և է Տաճկաստանցի ազգային մը ժամանակիս ներկայ դրութեան մէջ շատ աւելի հանգիստ ու համեստ ապագայ մը կրնայ պատրաստել իրեն իր ծննդավայրին մէջ, վայելելով միանգամայն ընտանեկան կենաց քաղցրութիւններն և իր ծննդավայրին հրապուրիչ տեսարանները։ Մինչդեռ ինքզինքը բաղդին հովուն տալով ո՛ գիտէ ի՛նչ փորձանքներէ, փտանգներէ անցնելէ յետոյ, երիտասարդութեան ամենէն անուշ ժամանակը փտնելէ յետոյ կամ փափաքին կարենայ հասնիլ և կամ բոլորովին հակառակ և ձախող վիճակի մը մէջ ընկնիլ։ Իբրեւ վերջին միջոց պանդխտութեան մէջ թշուառ չըլլալու՝ ամեն անգամ հայ գործաւորը պարտի ի միտ առնուլ թէ մինչև որ խնայասէր, չարաչար աշխատող և մոլորութիւններէ հեռի փախչող չի լինի, իր փափաքին չի կրնար հասնիլ։

ԳՐԱՍԷՐ ԵՐՈՒԱՆԴ

Սան-Ֆրանչիսքօ Քալիֆօռնիա

ՎԵՐՋ

ԾԽԱԿԱՆ ԶԵՂԾՈՒՄՆԵՐ

«Սամուէլ Երէց» Աբէ-Եւէի 3444 թիւ թերթին մէջ քահանայից նուէրական բարուքման համար կ'առաջարկէր Ծխական Կոնդակին դրութեան հաստատութիւնը եւ կ'ըսէր ի մէջ այլոց թէ քահանայք ոմանք իրենց գեղոն շահերուն արգելք կը նկատեն այդ դրութիւն։

«Սամուէլ Երէց» իրաւունք ունի կանոն մը հաստատութիւնը առաջարկելուն մէջ. զի առանց անոր ամէն բան կ'եղծանի, ինչպէս եղած է այժմ։

Լաւագոյն պիտի լինէր եթէ ընդարձակօրէն գրէր թէ ինչո՞ւ արգելք կը նկատէին այդ դրութիւն քահանայք ոմանք, թէ առանց այդ դրութեան ի՛նչ անպատշաճութիւն, շուկայական խորամանկութիւններ, աղտոտ հնարքներ տեղի կ'ունենան։

Այս ամէնքը կամ չէր գիտեր կամ համառօտիւ անցած էր և կամ մոռցած, այս պակասը մեր կողմանէ լրացնելու պէտքը կ'զգանք։

Սանձարձակ եղանակ մը կայ այժմ ծուխեր վաստկելու մէջ. հարուստ քահանան նորընծայ աղքատ քահանայի մը ծուխերը կ'առնէ, դիտողութիւն, բողոք չի լսուիր. պատիժ չկայ, ի՛նչ կ'ուզեն թող ընեն։

Անցեալ օր Պոլսոյ Թաղերէն միոյն եկեղեցին գացած էր, նորընծայ քահանայ մը եկաւ քովս և սկսաւ իր ցաւերը պատմել։ Երկու տարիէ ի վեր ձեռնադրուած է այդ քահանան, բայց պաշտօնապէս մէկ տուն ծուխ չեն տուած անոր, այսու ամենայնիւ նա իր պաշտօնին մէջ ժողովրդին սիրելի լինելով՝ ունեցած է 59 տուն ժողովուրդ՝ առանց հրաւէրի չզարնելով և ոչ մէկուն դուռը, առանց իր կարգին վեհութիւնը ստորնացնելու գծուծ միջոցներով, որոց մասին գրած էր «Սամուէլ Երէց»։

Բարեկամներէն մին օր մը կ'իմացնէ իրեն թէ զոյգի վաճառական մը կ'ուզէ տանիրէց ընտրել զինքը, ստոյգ աղբիւրէ գիտէ. Նորընծան չմտածեր երթալ հոն, այլ կը պատասխանէ թէ ծուխ շահելու համար առանց հրաւէրի տեղ մը այցելելը պատշաճութիւն չհամարիր ինք, թող ժողովուրդը գայ կոչէ զինքը, թող իր ընտրութեան ազատութիւնը չկաշկանդուի, հոս է ազնուութիւնը։

Եւ արդարեւ, երկու օրէն վերջը իրեն հրաւէր կուգայ նոյն տունէն, նորընծային կայցելէ, կ'իմանայ թէ ի մօտոյ հարսանիք ունին և թէ երկու կողման ալ տանիրէցը պիտի լինի միանգամայն։ Քահանային կ'օրհնէ տունը և կը մեկնի յետ խօսելոյ ինչ որ արժան էր և կարեւոր։

Հետեւեալ օրը իր եկեղեցւոյն լուսարարապետը և տանիրէցը կ'իմանան նորընծային ընտրութիւնը ի տանիրէցութիւն նոյն տան, ուր շատ երթեւեկած և մտնելու համար թախանձած են իրենց ու պարագայից և չեն յաջողած երկու մրցակիցներ. լուսարարապետը, որ ժամարար էր միանգամայն, անմիջապէս կը թողու եկեղեցին և շիտակ նոյն վաճառականին տունը. ալ լեզու կը կարի. ամեն դիւրութիւն կը ցուցնէ հարսանիքին ծախուց և չքնաղութեան համար. 1000 ղրուշի գործը 500 ղրուշով լմցնել. ծանօթ վարդապետ, եպիսկոպոս ունի, աժան գնով բերել. աժան գնով թանգ շուրջառներ գրկել՝ զի իր ձեռքն է գանձը. ուզածը կրնայ ընել. լուսարարապետ է, շատ գործեր ունի. ալ կ'սկսի անձնագովութեան, ամենէն անշան բաներէն ամենէն մեծ գործքերը պատմել. պէտք եղած կամ չեղած ժամանակ ատեններու կծիկ մը թող տալ, որուն ծայրը դժուար պիտի ըլլայ գտնել։ Բայց իր այս ամեն հնարագիտութեամբ չկրնար զանոնք իր ծուղակին մէջ գլորել, վերջապէս կը պատասխանեն թէ իրենք ընտրած են իրենց տանիրէցը. բայց գոնէ մանչուն (ոչ թէ որբ աղջկան) տանիրէցը ես լինիմ, թախանձագին կը խնդրէ լուսարարապետը որ 3 — 4 վախճանեալ քահանայներու ծուխերով ծանրաբեռնեալ էր արդէն։ Երբ յոյսը կը կորէ բոլորովին, դուրս կելնէ վշտահար, լաւագոյն չըլլա՞ր բնաւ ամօթահար։

Երբ Պատրիարքական ծխական կոնդակով հրամայուէր չը յափշտակել մէկուն միւսին ծուխերը. և օրինազանցը պատժուէր ինչպէս կըլլայ ի գաւառս, այս ծխական գեղծումները չէին ըլլար։

Ուրիշ օրինակ։ Քահանայ մը կ'իմանայ թէ Կիրակոս աղային տանիրէցը վախճանած է, տանտիրոջ փեսան կը գտնէ Գ[illegible] խանութին մէջ և կը խնդրէ նորա տանիրէցը ըլլալ, սա կը պատասխանէ թէ [illegible] աները երկու տանիրէց ունէր, մին Գալ[illegible] նորա հօրմէն ընտրուած, վախճանէն [illegible] ջը կ'ուզէր պահել միայն իր մօտ գտնուող միւս տանիրէցը, որ ի Գաւըգիւղ։ Հետամուտ քահանան փեսային խանութէն աներոջը վաճառատունը կը դիմէ, անկեց ալ նոյն պատասխանը կ'ընդունի. բայց [illegible] յուսահատիր, շիտակ կամուրջ կ'իջնէ [illegible] անտի շունչը կ'առնէ ի Գաւըգիւղ աներոջ տունը. հոն կնոջը, աղջիկներուն, քոյրերուն իր խնդիրը կ'առաջարկէ. կը խօսի ու կը խօսի երկար ժամեր, ուր ուրեմն նոքա ձանձրացած կ'ընդունին զինքն ալ [illegible] երկային տանուտէրը և փեսան կ[illegible] եղածը կ'իմանան ու կը բարկանան, բայց կը հարկադրուին չմերժել այդ երկրորդ ալ, որով վերստին տանիրէցի թիւը կ'ըլլայ երկու։

Դարձեալ ղեղծում։ Ժողովուրդ մը կուգայ խնդրել նորընծայէ մը որ [illegible] րեն տանիրէց լինի, սա կ'ընդունի [illegible] ապա ուրիշ տարեց քահանայ մը [illegible] խելով ի բացակայութեան ամուսնոյն կ'այցելէ նորա տունը, կը համոզէ կինն [illegible] ինք կ'ըլլայ տանիրէց. երեկոյին ամուսին եղածը կ'իմանայ, կուգայ նորընծային կ[illegible] գտնէ և իրողութիւնն յայտնելով կ'առ[illegible] որ ինք այցելէ ու օրհնէ տունն իբր օրինաւոր տանիրէց. բայց նորընծային կը մերժէ և հանդարտեցնելով կ'ըսէ թէ նա ալ քահանայ է և թէ ինք չուզեր որ հակառակութիւն ծագի այսպիսի խնդրոյ մը համար։

Ահա նոյն իսկ այսպիսի ղեղծումներ խափան բառնալու համար է որ կանոն մը պէտք է հաստատուի։ Ս.ՆՆՑԻՆ

ՀՍԿԱՅԱԳ ԶԲՕՍԱՆԱՒ մը շինուած է ի Քօբէնհակ, Ռուսիոյ Կայսեր համար։ Այս զբօսանաւը, որ կը կոչուի Ստանտարտ, 10 միլիոն ֆր. արժած է։ Առ այժմ տեղաւորուելու վրայ են երկու մեքենայները իւրաքանչիւրը 6000 ձիու զօրութեամբ, որոնք շինուած են ի Սէն-Տընի (Ֆրանսա)։ Նիքոլա Կայսրը շատ կը հետաքրքրուի այս զբօսանաւին շինութեամբ եւ ինք անձամբ ընտրած է այն փայտերը որով պիտի շինուին սրահները։ Ստանտարտը պատրաստ պիտի ըլլայ յառաջիկայ գարնան։

ԵՋԱԿԱՆ ԹՐԱՄՈՒԷՅ.— Ֆիլատելֆիոյ թրամուէյներու ընկերութիւնը իր գիծերուն վրայ դրած է ճաշարան-վակոններ։ Այս վակոնները սահմանուած են այն բազմաթիւ զբօսանքներուն համար որոցմով հետզհետէ աւելի կը զբաղին թրամուէյներու մէջ։ Վակոնները շատ պերճօրէն սարքուած են։ Պաղպաղակ, գարեջուր, կարկանդակ, պտուղներ, սանտուիչ և այլն կը հրամցունեն։ Ելեկտրական լոյսով լուսաւորուած են։ Ամեն մէկ վակոն առ նուազն ելեկտրական 265 փոքր լամպարներ ունի այլազան գոյներով, որոնք գիշեր ատեն դիւթական ճըշմարիտ երեւոյթ մը կուտան անոնց։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (60)

ԺԻՒԼ ՏԸ ԿԱՍԹԻՆ

ԲՕԼԻՆ ՏԸ ՄԵՐԻԱՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այն անստուգութեան մէջ ուր կը գտնուէր փափագներ ստեղծելով, որոշած էր բոլորովին դիպուածին ձգել ինքզինքը։ Պիտի ընէր ինչ որ պարտ էր ընել… Ճակատագիրը պիտի որոշէր կամ հակառակորդը կամ զինքը, և այս որոշումը տալէ յետոյ, աւելի հանդարտ զգաց ինքզինքը։

Կառքը զոր նշմարած էին, կեցած էր նկարիչին վկաներէն քանի մը քայլ անդին, ձիերը գետինը տոփելով, իրենց սանձերը ցնցելով։ Սպասեակ մը գետին ցատքեց, բացաւ դռնակը և Արտինի տեսաւ որ մէկիկ մէկիկ կառքէն դուրս ելան երեք մարդեր զորս խկոյն ճանչցաւ։ Իրվուա մարքիզն ու իր երկու վկաներն էին… Արդէն գետին իջած էին երբ չորրորդ անձ մը, ոսկի ակնոցով փոքրիկ ծեր մը, լայնեզր գլխարկով, տարօրինակ դէմքով, դուրս ելաւ կառքէն…

—Մեծանուն պաշտօնակիցներէս մէկը, ըսաւ բժիշկը նկարիչին, տոքթոր Վոքոնթուա, նշանաւոր յիմարաբոյժ մը։

Արտինի մտիկ անգամ չէր ըրած… Կը դիտէր Իրվուա մարքիզն ու անոր վկաներն որոնք իր վկաներուն միացած էին։

Իրեն պէս, մարքիզը ետ մնացած էր, տոքթոր Վոքոնթուաի քով։

Վկաները սկսան քննել տեղն ուր կը գտնուէին, յետոյ անոնցմէ մէկը հրամայեց երկու հակառակորդներու կառապաններուն որ հեռանան, և այս վերջինք գացին ծածկուեցան ձիարշաւի դաշտին աջ և ձախ կողմը, ծառաստանի պարսպներուն ետին… Յետոյ մենամարտին պատրաստութիւնները տեսնուեցան։

Կոմսը՝ Արտինի վկաներուն մօտենալով ըսած էր.

—Շուտ ընենք, պարոններ։ Մեր ներկայութիւնը կրնայ դիտուիլ։

Եւ պատրաստութիւնները շուտով լըմնցան։ Հինգ ֆրանքնոց մը նետեցին օդին մէջ՝ գետնին և ատրճանակներուն ընտրութեան համար։ Երկիցս բախտը յաջող գնաց Արտինիին, — ի՛նչ որ բարեգուշակ երեւցաւ իր բարեկամներուն։ Հեռաւորութիւնը չափեցին։ Ատրճանակները լեցուցին, յետոյ նշան ըրին երկու հակառակորդներուն որ յառաջանան։

Մարքիզը հանեց մուշտակը, Արտինի ալ իր թիկնոցը և իրարու մօտեցան… Երկուքն ալ պղնձէ անդրդուելիութիւն ունէին։ Մարքիզը, չոր, ժգոյն, կարծես ինքնաշարժ, Արտինի աւելի թանձր, աւելի ճապուկ, կարմրութիւններ ունենալով ինծօրակներուն վրայ… Ձեռքերն անոնց յանձնեցին, երեք հարուածները տուին ու երկու պայթիւններ թնդացին գրեթէ միեւնոյն ժամանակ… Պ. տ'Իրվուա տեղէն չէր շարժած… Արտինի ինկաւ…

Իր բարեկամներն ու բժիշկը վազեցին…

Մարքիզը նորէն կեցած էր իր տեղը, սպասելով որ երկրորդ ատրճանակը տան իր ձեռքը, բայց նկարիչին վկաներէն մէկը յառաջանալով ըսաւ.

—Կրնաք մեկնիլ, պարոններ։ Ամեն բան վերջացաւ։

—Մեռա՞ծ է, հարցուց մարքիզը որուն աչքը կը շողար գոհացած ատելութեամբ։

—Ոչ, պարոն, բայց վէրքը շատ ծանր է։

Պ. տ'Իրվուա առաւ գլխարկը, հագաւ մուշտակը զոր մէկ կողմ ձգած էր և հեռացաւ վկաներուն հետ, առանց ցոյց տալու յուզման ամենափոքր նշան մը։ Իր բարեկամներն իրմէ աւելի յուզուած էին։ Երեքն ալ ուղղուեցան իրենց կառքը, նշան մը ըրին կառապանին որ մօտեցուց կառքը, մէջը նստան և շուտով անհետ եղան ծառուղիներուն մէջէն որք դեռ ծածկուած էին թանձր մշուշով, ու շատ չանցած կառքը ծածկուեցաւ անոնց աչքերէն։

Արտինի գետին տարածուած էր իր բարեկամներուն միջոցաւ, կառքին բարձիկներուն վրայ զորս գացած բերած էին…

Բնաւ կոծ մը չէր խուսափեր իր շուրթերէն։ Աչքը շողարձակ էր, հիացական։

Մրմնջեց.

—Զինքը պիտի տեսնեմ… չէի սխալած։ Ինծի կը կանչէր…

Բժիշկը, որ խնամով քննած էր վէրքը, տխուր և ծանր դէմք մը ունէր…

—Գնդակը, ըսաւ, երկու կողերուն մէջ մտնելով գացեր խրեր է դեռ չեմ գիտեր ո՛ւր, ոսկրի՞ն թէ միսերուն մէջ…

—Ծա՞նր է, հարցուց տ'Ալպալա զոր յուզումը կը խեղդէր։

Տոքթորը չպատասխանեց։ Միայն ըսաւ.

—Զինք կրնար հոս ձգել…

—Ո՞ւր փոխադրել։ Փոխադրելի՞ է։

—Եթէ կարելի ըլլար հոս խնամել, աւելի աղէկ. բայց ի՞նչպէս։

—Կուզեմ տունս փոխադրուիլ, ըսաւ նկարիչը որ իմացած էր։

—Շատ հեռու է, ըսաւ բժիշկը, յետոյ չորս յարկ ելլալու է։

—Այնպէս կուզեմ, ըսաւ Արտինի անանկ շեշտով մը որ պատասխան չէր ընդունէր… Իմ տունս մեռնիլ կուզեմ…

—Նախ և առաջ, յարեց տոքթորը, չըսինք թէ պիտի մեռնիս… Եւ կը յուսամ որ փրկենք զքեզ։

Արտինի տխրօրէն երերցուց գլուխը, դժուարահաւան երեւոյթով մը։

—Անօգուտ է, ըսաւ, զիս խաբելու ջանալ… կը զգամ թէ գործս լմնցած է… միայն ըսէք որ այն մարդը զարնուեցա՞ւ։

—Մարքի՞զը։

—Այո… ինկայ… բան մը չտեսայ։

—Չզարնուեցաւ։

—Թշուառակա՜նը… սակայն աղէկ նշան առի… ատրճանակիս ծայրը բռնած կը կարծէի զայն… պիտի ապրի… պիտի շարունակէ իր գծուծ արարքներն ու ոճիրները… Երկինք արդար չէ…

Եւ իբր թէ այս մտածումէ մէկէնիմէկ տխրեցուցած ըլլար զինքը, կամ թէ արեան կորուստը տկարացուցած ըլլար, Արտինի ա՛լ չխօսեցաւ… Աչքերը գոցուեցան և կարծես քնացաւ։

Տ'Ալպալա վեր ցատքեց մէկէնիմէկ։

—Արդեօք մեռա՞ւ, հարցուց։

—Ոչ, ըսաւ տոքթորը։—Հակազդեցութիւնն է որ առաջ կուգայ… Անշուշտ պիտի նուաղի։—Ի՞նչ պիտի ընենք։

Կը խորհրդակցէին, երբ յանկարծ զիրենք բերող կառապանը վազեց՝ յուզուած երեւոյթով։

—Պահակնե՛րը, ըսաւ։

Արդարեւ երկու անտառապահներ կը վազէին որչափ արագ որ կրնային։

Ոչ ոք ուշ դրաւ անոնց։

Իրե՞նց ինչ, ուրիշ մտադրութիւններ ունէին։ Կառապանն հեռացաւ՝ զարմանալով որ ազդեցութիւն առաջ չբերաւ, և պահակներն խկոյն մօտեցան խմբակին… Մարդերը քննեցին ու վիրաւորեալը տեսան…

—Մենամա՞րտ տեղի ունեցաւ, հարցուց երկուքէն մէկը։

—Կը տեսնաք կոր, պատասխանեց Տէման։

—Սուրո՞վ։

—Ատրճանակով…

—Զէնքերն հո՞ս են…

—Առէք…

—Ձեր անուններն ալ պէտք են մեզի։

—Պիտի տանք… ինչ որ ուզէք պիտի տանք, ըսաւ տ'Ալպալա, բայց նախ և առաջ ծառայութիւն մը ըրէք մեզի… Անպատճառ պատգարակ մը գտէք մեզ։

—Ծա՞նր է, հարցուց պահակներէն մէկը։

—Մեր բարեկամը մահամերձ է։

Մարդն ակնարկ մը նետեց վիրաւորեալին վրայ, մահուան պէս ժգոյն տեսաւ զայն, բուռն յուզում մը զգաց և ըսաւ.

—Պիտի բերեմ, պարոններ։

Եւ անհետ եղաւ իր պաշտօնակցին հետ, ա՛լ չխորհելով իր տեղեկագրին վրայ։

Քանի մը վայրկեան ետքը երկու ազնիւ մարդիկը ետ կը դառնային անկողինով մը ու պատգարակով մը, այն պատգարակներէն մէկը որոնք կը գործածուին տանելու վար ինկող ձիարշաւիկները, ձիարշաւի օրերը։

—Եթէ հեռու չպիտի երթուի, ըսաւ պահակներէն մէկը, աւելի կառքէն աղէկ է և հետ բերինք մեր բարեկամներէն երկուքը որք պաշտօնի վրայ չեն և որք պիտի կրնան օգնել ձեզ։

—Չի մերժուիր, ըսաւ տոքթորը… վիրաւորեալն աւելի մեղմիւ պիտի տարուի քան կառքի մէջ, որուն ցնցումները կրնան ծանրացունել իր վիճակը։

Ջերմապէս շնորհակալ եղան անտառապահներուն, և տխուր թափօրը ճամբայ ելաւ։

Այս պատգարակն ու այս մարդերն էին զորս Բոլին տեսած էր Աքասիա փողոցին սանդուխին վրայ, և այս անողորմ տեսարան խլած էր իրմէ այն սոսկալի աղաղակը զոր լսեցինք։

Արտինի մեռած, մեռած իրեն համար, ասիկա նոր սուգ մըն էր իր կեանքին մէջ, վախճանն էր իր յոյսերուն, վտանգի մարքիզն, յաղթական, այս վտանգէն խուսափած, տեսնելով որ բախտը կը ժպտէր իրեն, աւելի յանդուգն, աւելի անողորմ պիտի ըլլար։

(Շարունակելի)

Կ. ՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏ. 21/2 ՍԵՊՏ. 1895

Քաղաքական կացութիւն

ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ՄԸ ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒԻԼԸ ՔՈՆԿՕՅԻ ՆՈՐԱՍԱԶՄ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մինչ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը Ֆրանսայի հետ վէճի բռնուած է Պ. Ուալլր Ամերիկացւոյն 20 ամեայ բանտարկութեան դատապարտութեան համար, Անգլիոյ կառավարութիւնն ալ Պելճիոյ կամ Քոնկոյի հետ վէճի բռնուած՝ Պ. Սթոքս Անգլիացւոյն Քոնկոյի մէջ ի կախաղան հանուելուն համար։ Այսքան ծանր դէպք մը, Անգլիացւոյ կամ անգլիացի հպատակի մը օտար Պետութեան մը կողմէ մահուամբ պատժուելու դէպքը, շատ ժամանակէ ի վեր լսուած բան չէր, և միջազգային յարաբերութեանց տեսակէտով, խնդիրն առաջին կարգի կարեւորութիւն ունի։ Նախ և առաջ Պելճիոյ Խորհրդարանին մէջ հարցուեցաւ կառավարութեան թէ ինչ է այս։ Բացատրութիւն պահանջուեցաւ։ Բայց կառավարութիւնը ձեւական հնարք մը ճարելով, բացատրութիւն տալ չուզեց, առարկելով թէ՝ Քոնկոյի Պետութիւնը տակաւին միացեալ չըլլալով Պելճիոյ հետ՝ իբրեւ օտար երկիր կը նկատուի, որոյ ներքին գործերուն վրայ հարցում չի կրնար ըլլալ Պելճիոյ Խորհրդարանին մէջ։ Խնդիրն օրաձգելու հնարք մ'էր լոկ, զի ո՞վ չի գիտեր թէ Լէոբոլտ թագաւոր, որոյ ներկայացուցիչներն են պելճ նախարարք, նաեւ Քոնկոյի Պետութեան վեհապետն է, որ իւր հրամանները ի գործ կը դնէ պելճ նախարարաց ձեռամբ կամ անոնց գիտութեամբ, և ամեն անգամ որ գլուխը նեղը մնայ, Քոնկոյի Պետութիւնը պելճ կառավարութեան կը դիմէ, յորմէ կ'ընդունի իւր զինուորական և դրամական ոյժերը, ևն։ Խնդիրն այն է որ նոյն իսկ պելճ կառավարութիւնը տակաւին մանրամասն տեղեկութիւն ունենալ չի թուիր այն ծանր դէպքին վրայ։ Մինչեւ հիմա գիտցուածն այսչափ է որ Պ. Սթոքս Քոնկոյի կողմէն հաստատուած յանցող վաճառական մ'էր, որ ամբաստանեցաւ ռազմամթերք հայթայթելուն համար այն բնիկներուն որոց հետ կռիւի մէջ է Քոնկոյի Պետութիւնն, որոյ կռիւներն երբեք չեն լմննար այն բնիկներուն հետ որոց հողերն իւրացնել ու հետամուտ է շարունակ։ Մէկն ինէր հարցունէր այս Քոնկոյի պաշտօնեայներուն, ամեն երկիրներէ, այլ մանաւանդ Պելճիայէ եկած այն բախտախնդիրներուն թէ ինչ իրաւունք ունիք երթալ յափշտակելու Ափրիկէցի բնիկներու հողերն, և անոնց դէմ մահացու պայքարներ մղելու. Քոնկոյի բնիկներն իրենց հողին վրայ են։ Եթէ սիրով կ'ուզէք շահիլ և կապել քաղաքակրթութեան հետ, չա՛տ լաւ. իրաւ որ այն ատեն ծառայութիւն մը կը մատուցանէք Մարդկութեան և քաղաքակրթութեան, անծանօթ վայրեր բանալով վաճառականութեան առջեւ. բայց այն բնիկներն ալ մարդ են ձեզ պէս։ — Բայց ո՞վ պիտի բսէ ասիկա։ Քրիստոսի պատուական խօսքին համեմատ, թո՛ղ անմեղն արձակէ առաջին քարն։ Եւրոպական ամեն ազգեր ալ քիչ շատ նոյն մեղքը գործած են՝ Նոր գտնուած երկրաց բնիկներուն նկատմամբ, և Անգլիացիք ու Ամերիկացիք՝ ամենէն աւելի։

Բայց ո՞վ դատեր և պատժեր է զՊ. Սթոքս.—Այնպիսի չուտափոյթ դատաստան կ'երեւի թէ շատ ժամանակէ ի վեր չէր տեսնուած ո՛չ միայն ափրիկեան հողին վրայ, այլ նոյն իսկ Եւրոպիոյ մէջ։ Բնիկներու դէմ մրցանք կատարելու պաշտօն ունեցող պելճ հազարապետ մը դատաւոր կը կանգնի, (թէ ամբաստանիչ և թէ դատաւոր,) և նոյն հետայն դատապարտելով, վճիռն անմիջապէս գործադրել կուտայ։ Անգլիացին կը կախուի, առանց միջոց տրուելու իրեն որ վերաքննութեան կամ վճռաբեկ ատենի մը դիմէ։ Հազարապետն այնքան անճապարանքով գործեր է որ իւր պաշտօնակիցներէն մին զզուանքէն հրաժարական տուեր է։ Ի՞նչ անպատեհութիւն կրնար ունենալ վճռոյն գործադրումն յետաձգել։ Եթէ մարդն յանցաւոր էր, կրնար դարձեալ պատժուիլ, բայց հասարակաց կարծիքն և մարդուն հայրենակիցներն ալ համոզուած կ'ըլլային անոր յանցաւորութեան, ինչ որ չեն հիմա։ Խոհեմութիւն, միջազգային քաղաքավարութիւն, մարդասիրութիւն պէտք էր թելադրէին հազարապետին՝ յետաձգել Անգլիացւոյն կախաղան հանուիլն, և դատը վերաքննութեան մը անցունել ո՛և իցէ կերպիւ։ Քոնկոյի Պետութիւնն եւրոպեան անկախ Տէրութեան մը օրինական յատկութիւնները չի կրնար ունենալ. զի պարզօրէն միջազգային համաձայնութեան մը արդիւնք է. իւր բոլոր իշխանութիւնն և իրաւունքները կը սահմանափակուին Տէրութիւններէն, որք մարդ կախելու արտօնութիւնն ևս իրեն տուած չեն, կ'ըսեն Լոնտոնի լրագիրք, կրթելով Պրուսէլի միջազգային դաշնագրին, որով կազմակերպուեցաւ Քոնկոյի Պետութիւնը։ Տէրութիւնք պարզօրէն սահմանած էին պատժել իրենց յանցաւոր հպատակները բանտարկութեամբ և տուգանքով, և ամենեւին արտօնած չէին Քոնկոյի Պետութեան՝ մահուան յանկուածական պատիժն ալ ինք ի գործ դնելու։ Տեսնենք Լէոբոլտ թագաւոր անմիջական կերպիւ իրմէ կախում ունեցող բարձրաստիճան պաշտօնակալի մը այս խիստ ընթացքին վրայ ի՞նչ բացատրութիւն հաղորդել պիտի տայ անգլ. դահլիճին։

ՄԱՏԱԿԱՍՔԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀՈՎԱ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ

ԱԿԱՆԱՏԵՍ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թայմզի յատուկ թղթակիցը կը գրէ Մատակասքարի մայրաքաղաք Անդանանարիվոյէ թէ Ֆրանսացիներուն անժխտելի յաջողութեան և դէպ ի մայրաքաղաք յառաջխաղացութեան չնայելով, Հովա կառավարութիւնն և Հովա ժողովուրդը շատ անփոյթ են։ Պատիր յոյսերով կ'օրօրուին։ Հովա պաշտօնէութիւնը կը խաբէ ժողովուրդը՝ սուտ յաղթութեանց լուրեր տարածելով։ Յուլիս 13ին լուր ելաւ քաղաքին մէջ թէ Մօրիս կղզիէն եկող շոգենաւ մը՝ յանգէտս Ֆրանսացւոց՝ հեռագիր մը բերեր է, ծանուցանող թէ Անգլիոյ և Ֆրանսայի մէջ պատերազմ ծագած է։ Հովա պաշտօնէութիւնն ա՛յն աստիճան հաւատ ընծայեց որ անգլիացի գաղթականներն անգամ երկմտեցան թէ մի գուցէ ճշմարիտ ըլլայ։ Հովաները կ'ուրախանային, և արդէն կ'իմանային թէ Ֆրանսացիք նահանջելու վրայ են։ Երբ ստուգուեցաւ թէ անհիմն էր, թէ Ֆրանսացիք՝ սա չերթալէ զատ՝ գրաւած են զՄէվաթանանա և Հովա բանակը բնաւ չէ կրցեր դիմադրել, այն ատեն դժգոհութիւններու յեղաշրջում մը տեղի ունեցաւ։ Բայց Հովա պաշտօնէութիւնն այնքան թոյլ է որ ազգը դիմադրութիւն ընել չի խորհիր, այլ ամեն ոք իւր հաշւոյն զեղծումներ գործելով, որ առաջ հարստութիւն դիզել կը նայի։ Հովա ժողովուրդն ալ անտարբեր է։ Մայրաքաղաքին մէջ պարտող մը բնաւ չի կարծեր թէ երկիրը մեծ պատերազմի բռնուած է, թէ թշնամին անդրդողդ քայլերով կուգայ մայրաքաղաքին վրայ, թէ Հովա իշխանութիւնն ամենամեծ տագնապի մատնուած կը գտնուի։ Հովա ազնուականները փառաւոր ապարանքներ կը շինեն, որովհետեւ անձրեւներու եղանակը վերջացած է։ Սկսած է հարուստ դասակարգի ամուսնութեանց եղանակն, և աւագանին կ'ամուսնանան՝ շքեղ հարսնիքներ կատարելով։ Ֆրանսայի հետ պատերազմը բոլորովին մոռցուած էր մօտերս, Մատակասքարի երկու մեծ գերդաստանաց խնամութիւնն հաստատող հարսնիքի մը առթիւ, յորում ճոխ սեղան մը տրուեցաւ 36 տեսակ կերակուրով, ճաշացուցակը ֆրանսերէն գրուած։ Հացկերոյթը տեւեց գրեթէ բոլոր օրը։

ՄԱՐՈՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Պեչիպօքա գետին մէջ խարսխած ֆրանսական երեք թնդանօթակիրք ռմբակոծեցին զՄարովոայ և շրջակայ գիւղերը, մինչ Ալժերիի զօրագունդն և Սաքալավաներ (բնիկ Մալկաշ ցեղ, հակառակորդ տիրապետող Հովա ցեղին), բազմահարուածեան հրացաններով զինեալ և հրամանաւ ֆրանսացի ծխաւոր սպայներու, մօտէն պարկին այլ և այլ գիւղեր։ Հովա զօրքերը ծանր կորուստ կրեցին։ Ամեն գիւղեր մի առ մի գրաւեցան մինչեւ որ Հովա դրօշը մնաց միայն Մարովոայի վրայ։ Կէս գիշեր էր արդէն, երբ ան ալ իյնալ գրաւեցաւ։ Ֆրանսացի հրամանատարք այս առթիւ, ինչպէս և նախորդ ճակատամարտներու առթիւ, Սաքալավաներուն առատօրէն խմցուցած էին ռոմ, և ամենքն ալ աւելի կամ նուազ գինով էին։ Իրենց ձեռք ինկած 400ի չափ այրեր և կիներ սպաններ են։ Իբրեւ փոխադարձութիւն Հովաներն իրենց ձեռք ինկած Սաքալավա գերիներուն գլուխը կը կտրեն։ Ալժերիի զօրքերն ևս կ'ամբաստանուին ծայրայեղութիւններ գործած ըլլալնուն համար։ Սաքալավաները լաւ զինուած են, զի միայն մէկ գործարան 10 հազար բազմահարուածեան հրացան ծախեց անոնց երկու տարի առաջ։ Այս վայրենի բնիկներ յառաջապահներ են ֆրանսական զօրաց, որոց քաղաքավարութիւնն և մարդասիրութիւն ամեն կասկածէ վեր են։ Բայց երկու բնիկ ցեղերն, հակառակ կողմեր բռնած, վայրագութեամբ կը զարնեն զիրար։ Բնիկ ցեղերը կանոնաւոր զօրքերէն երեք անգամ աւելի շուտ կը քալեն. և շատ կը վախցուի որ Սաքալավաներն ի մօտոյ պիտի մտնեն Ֆիանարանցոա և Ամպոսիդրա հարուստ քաղաքներն և կողոպտեն զանոնք։

ՄԱՐՈԿԻ կառավարութիւնը, քառորդ միլիոն ֆր.էն զատ զոր վճարեց գերման հպատակի մը սպանման համար, 112,500 ֆր. ալ վճարեց ի փոխարէն Աննա անուն հոլանտական առագաստանաւուն Մարոքցիներէ կողոպտուելուն։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ դրօշակին վրայ երկնային նշան մ'ալ աւելցաւ, ի նշան ընդունելութեան Եուխթահի՝ ի շարս Նահանգաց, որով այն երկնային նշաններուն թիւը բարձրացաւ 45ի, թէպէտ առաջիկայ յուլիս 4էն ետքը միայն Եուխթահ պիտի ստանայ ամերիկեան նահանգային ինքնօրինութեան վիճակը։

ՉԻԴՐԱԼԻ ԽՆԴԻՐՆ է միակ խնդիրն որոյ վրայ նախորդ և արդի վարչութիւնք մաքառեցան Լորտերու Ժողովոյն և Երեսփ. Ժողովոյն մէջ, —ի բաց առնլով Քորտիթ վառօդի խնդիրն, որոյ մասին եւս երկոքին կուսակցութիւնք չհամաձայնեցան, բայց անիկա յարաբերական կարեւորութիւն մը չի կրնար ունենալ Չիդրալի խնդրոյն նման։

ՊՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պ. Սդամպուլոֆի մահէն ի վեր 40 օր անցած ըլլալով, անցեալ երկուշաբթի պատարագ մատուցուեցաւ Սօֆիայի գերեզմանատան մատրան մէջ։ Կրօնական հանդէսը կատարել բարեկարգութեամբ տեղի ունենալու համար, ի բաց թողուեցաւ մայր-եկեղեցւոյ մէջ կատարելու խորհուրդն և հրաւէր չղրկուեցաւ. միայն անհատապէս ընտանեաց բարեկամք հրաւիրուեցան։ Հարիւր հոգիի չափ ներկայ էին, և պատարագեց Սօֆիայի եպիսկոպոսը։

ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԲԱՆԱԿԻՆ պաշտօնական լրագիրը կը հրատարակէ հրամանագիր մը որով գործօն վիճակի մէջ գտնուող հետեւակազօրաց կէսը կը ցրուի, հեծելազօրաց ալ մէկ երրորդն։ Այս տնօրէնութիւն ընդհանուր գոհունակութիւն կը պատճառէ, և ցոյց կուտայ թէ իշխանապետութիւնը աւելորդ ծախքեր ընել։

ՀԵՌԱԳԻՐ

ՊԵՐԼԻՆ 31 օգոստ.—Թիւ 41 Թորփիլանաւն ընկղմեցաւ Հիւսիսային Ծովուն մէջ, 13 հոգի խեղդուեցան։

ՈՒԱՇԻՆԿԴԸՆ.—Բեքինէ կը հերքուի այն լուր թէ Լիւսի փոխարքայն նախագահ կարգեցաւ քրիստոնեայ ջարդերուն վերաքննիչ քննիչ յանձնաժողովոյն։ Նոյն իսկ այս փոխարքայն ամբաստանեալ է իբրեւ թելադրիչ այն ջարդերուն. բայց ցորչափ քննութիւնը տեւէ, իւր փոխարքայական պաշտօնին վրայ պիտի մնայ, հրամանաւ կայսեր։

ՀՌՈՄ.—Ումպերդօ թագաւոր Աննունցիատայի պատուանշանին մեծ ժապաւէնը տուաւ Ճափոնի կայսեր հօրեղբայր Քոմացու իշխանին։

—Պինկէն եղբարց սնանկութեան պատճառաւ, Ճենովայի դատաւորին պահանջմամբ Հռոմայ ընդհ. դատախազն հարցաքննութեան ենթարկեց սեղանաւոր Սարաթուն և մի քանի Սակարանի միջնորդներ։

ՓԱՐԻԶ.—Տիւշէն զօրավար կը հեռագրէ թէ ֆրանսական բանակը կը շարունակէ իւր յաղթական ընթացքը դէպ Անթանանարիվօ մայրաքաղաքը։ Ցարդ Ֆրանսա ետ ղրկուած են 2,200 ֆրանսացի զօրք։

ՄՈՍՔՈՒԱ.—Սմոլէնսքի նահանգին մէջ Ժուշնով քաղաքն (4000 բնակիչ) երէկ կիսովին հրոյ ճարակ եղաւ։

ՓԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Ելմտական պաշտօնարանէն հրամանագրեր հրատարակեցան, կարգադրելով ռուսական ոսկեդրամի ընդունելութիւնը մաքսային պաշտօնարաններէ և որոշելով անոնց ընթացքն, ինչպէս և օտար դրամոց ընթացքն, որոց եւս Ռուսիոյ մաքսատուներէն ընդունելութիւնն արտօնուած է։

ԼՈՆՏՈՆ, 31 օգոստոս.—Խորհրդարանին մէջ կառավարութիւնն յայտարարեց թէ Մեքոնկի երկու եզերքներուն վրայ ամեն խնդիրներու մասին Ֆրանսայի հետ համաձայնութիւն գոյացնելու համար բանակցութիւններ կը կատարուին. կը յուսացուի որ Ֆրանսա ճանչնայ Անգլիոյ իրաւունքներն և խնդիրները բարեկամական կարգադրութեամբ լուծուին։

ՉԵԹԻՆԷ.—Ժողովուրդը Ռուսիոյ հիւպատոսարանին առջեւ երթալով համակրական մեծ ցոյցեր ըրաւ նուէր եղած զէնքերուն և ռազմամթերքներուն համար։

ՍՊԱ.—Պելճիոյ Թագուհին վար իյնալով գլխէն վիրաւորուեցաւ. բայց ծանր բան մը չէ։

ՓԱՐԻԶ.—Ծերակուտական Պ. Մանիէ տնօրէն Էվէնման լրագրի, որ Հարաւի Երկաթուղւոյն գործին համար պիտի ձերբակալուէր, աղտոտ լաթերու կողովի մը տակ պահուըտելով, անյայտ եղաւ Փարիզէն։

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

Շաբաթ առաւօտ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Աբրահամ էֆէնտիի հետ կայս. պալատ գնաց՝ Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ իր շնորհաւորութիւնը մատուցանելու և ընդունուեցաւ առաջին սենեկապետ Հաճի Ալի պէյի կողմէ։ Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական ուղերձ մը մատոյց և Հաճի Ալի պէյի միջոցաւ արժանացաւ կայսերական մեծարանաց։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ առաւօտ հանդիսաւոր Պատարագ մատոյց Օրթագիւղի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ, որոյ տօնախմբութիւնն էր։

Շաբաթ իրիկուն գիւղին աւագերէցն և թաղական խորհրդոյ անդամք կառքերով գացին Ղալթիոյ խորհրդարանն, ուր կը գտնուէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրն և Օրթագիւղ առաջնորդեցին Ն. Ամենապատուութիւնն, որ ներկայ գտնուեցաւ երեկոյեան ժամերգութեանց, յաւարտ որոյ թաղական խորհրդարանին մէջ հանդիստ առնելէ ու պատուասիրուելէ յետոյ, հիւրընկալուեցաւ Ճանըմեան Մկրտիչ էֆէնտիի տունը։

Ս. Պատրիարք Հայրն երէկ առաւօտ եկեղեցի առաջնորդուեցաւ քահանայից դասուն կողմէ և Պատարագ մատոյց ու քարոզ խօսեցաւ նիւթ ունենալով քրիստոնէութեան ոգին։ Հաւատացելոց խուռն բազմութիւն լցուած էր եկեղեցւոյն մէջ, ուր եկած էին նաեւ շրջակայ ու հեռաւոր թաղերէ։

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, Ս. Պատրիարք Հայրը դարձեալ հանդիսաւոր կերպով առաջնորդուեցաւ գիւղին Ս. Թարգմանչաց վարժարանն, ուր զգեստաւորեալ էր արդէն և որուն մեծ սրահը այս առթիւ շքեղապէս զարդարուած էր, Ն. Ամենապատուութիւնն հոն պահ մը հանգիստ առաւ ու պատուասիրուեցաւ և յետոյ առաջնորդուեցաւ Ճանըմեան էֆէնտիի տունն, ուր մնաց երէկ գիշեր ալ։

Ս. Պատրիարք Հայրն այս գիշեր ալ պիտի հիւրընկալուի Օրթագիւղի աւագերէց Տ. Սահակ Աւագ քահանայի տունը։

Պէշիկթաշի Թաղական խորհրդոյ համեմատական ընտրութիւն երէկ կատարուելով, թաղական խորհուրդը վերջնապէս ընտրուեցաւ հետեւեալ կերպով.

Զէնոբ	էֆ.	Հիսարեան
Յովհաննէս	»	Այալըմճեան
Յարութիւն	»	Սամանճեան
Բարսեղ	»	Կիւլպէնկեան
Տրդատ	պէյ	Տատեան
Կարապետ	էֆ.	Նավրուեան
Քերովբէ	»	Կիւմիւշեան
Յովհաննէս	»	Կիւմշեան
Նշան	»	Տիւզենճեան

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Յառաջիկայ հինգշաբթի (22 օգոստոս) որ է Տօն Սրբոյն Յովակիմայ և Աննայի, ըստ կտակագրի սափրիչ Արհեստաւորաց, Ազգ. Հիւանդանոցի Ս. Փրկչի մատրան մէջ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրամանաւ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Արժ. Տ. Գէորգ Ծ. վարդապետ Երէցեան, ի հանգիստ հոգւոյ ննջեցելոց վերոյիշեալ բարեպաշտ արհեստաւորաց, որք այս առթիւ հացկերոյթ մը պիտի տան ընդհանուր պաշտօնէից։

Զայս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցանենք.

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. Հիւանդանոցի
Ատենադպիր Վ. Ատենապետ
ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆ Գ. Խ. ԷՎՐԵՆԱՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
20ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆ

Վարժարանիս վերաբացումը տեղի կ'ունենայ յառաջիկայ սեպտեմբեր չորս, երկուշաբթի։ Նոյն օրէն սկսեալ, ամեն առաւօտ մինչեւ ժամ 5 (Ը Թ.), Տնօրէնը պատրաստ է իւր վարժարանին մէջ ընդունելու այն անձինքն որք ներքին կամ արտաքին նոր աշակերտաց ընդունելութեան համար կը փափաքին տեսակցիլ իրեն հետ։

Դասերը պիտի սկսին յաջորդ երկուշաբթի առաւօտ, Սեպտեմբեր 11։

Հիմնադիր-Տնօրէն
19 օգոստ. 1895 Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Իւսկիւտար 411 1—2

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանիս ԼԱ.րդ տարեշրջանը կը սկսի յառաջիկայ սեպտեմբեր ամսագլխէն։ Վերաբացումը տեղի պիտի ունենայ օգոստ. 28ին երկուշաբթի, իսկ դասերը կը սկսին սեպտ. 4ին։

Այս առթիւ պատիւ ունիմ ծանուցանել թէ, վարժարանիս հիմնադիր տէրը մնալով հանդերձ, յանձնած եմ տեսչութիւնը Գալուստ էֆ. Մալեժեանի, որ միշտօրեայ պիտի հսկէ խորհրդակցութեամբ բարեփոխեալ ծրագրի գործադրութեան վրայ։

Աշակերտութիւն տալ փափաքողներ կը հրաւիրուին դիմել վարժարան, ուր ամեն օր կը գտնուի մինչեւ կէս օր Հիմն. Տնօրէնը։

Մ. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ
7 գոստ. 1895
Իսկ. Իճատիէ 339 4—8

ԿՈՒԶՈՒԻ

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ՝ ԲԱՅՑ ԳՈՐԾԱԾԵԼԻ ԼԱՒ ԴՐԱՄԱՐԿՂ ՄԸ։ Դիմել մեր Խմբագրատունը։

Ներքին լուրեր

ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

Պաշտօնի վրայ գտնուող և անպաշտօն բոլոր նախարարք, Եգիպտոսի Խտիվ Բարձր. Ապպաս փաշա և կրօնական, քաղաքային ու զինուորական բոլոր պաշտօնատարք շաբաթ օրը կայս. պալատ գացին՝ Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ իրենց շնորհաւորութիւնները մատուցանելու և Ն. Կ. Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունենալով՝ արժանացան կայսերական մեծարանաց։

* * *

Վեհ. Սուլթանը շնորհակալութեան հեռագրեր ուղղեց ի պատասխանի եւրոպական վեհապետաց շնորհաւորական հեռագրերուն։

* * *

Ներքին գործոց Նախարար Վսեմ. Խալիլ Րիֆաթ փաշա նոյն օրը Վեհ. Սուլթանին մատոյց Համազգային Անկելանոցին բանալիները։ Ն. Վեհափառութիւն, ի նշան Իր բարձր գոհունակութեան, ականակուռ Մէճիտիէ պատուանշան շնորհեց Խալիլ Րիֆաթ փաշային։

* * *

Շաբաթ օրը հպատակ բոլոր հասարակութեանց հոգեւոր պետերն ինչպէս նաեւ դեսպանատանց առաջին թարգմանները կայս. պալատ երթալով իրենց շնորհաւորութիւնները մատուցին։

* * *

Նոյն օրը հպատակ հասարակութեանց գլխաւոր աղօթատեղիներուն մէջ հանդիսաւոր բարեմաղթութիւններ եղան վասն կենաց Վեհ. Սուլթանին։

* * *

Վեհ. Սուլթանին հրամանաւ, առջի օրը ազատ արձակուեցան թեթեւ պարտքի համար բանտարկուած այն անձերն, որք անկարող են վճարելու իրենց պարտքը. Ն. Վեհափառութիւն անոնց պարտքը վճարելու համար գումար մը շնորհած ու ղրկել տուած է Դատական Նախարարութեան։

Նոյն օրն ազատ արձակուեցան նաեւ կեդրոնական բանտին մէջ գտնուող եօթանասունըչորս բանտարկեալներ, որք իրենց պատժոյն երկու երրորդ մասն աւարտած էին. ասոնց իւրաքանչիւրին բաշխուեցաւ Վեհ. Սուլթանին կողմէ շնորհեալ մէկ մէկ ոսկի։ Թէ՛ ասոնք և թէ պարտուց համար բանտարկեալ ու ազատ արձակուած անձինք բարեմաղթութիւններ ըրին վասն կենաց Վեհ. Սուլթանին։

* * *

Օտար երկիրներու մէջ գտնուող օսմանեան դեսպանատանց մէջ շաբաթ օրը ընդունելութիւնք եղան և գիշերն ալ սեղաններ տրուեցան ու լուսավառութիւնք կատարուեցան։

* * *

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, գաւառներու մէջ ալ հանդէսներ ու լուսավառութիւններ կատարուած են։

* * *

Շաբաթ օրը տեղի ունեցաւ Ֆէսխանէի մօտ կառուցուած կաշիէ գործարանին և Ֆէսխանէի գործարանին համար կազմակերպուած տղայոց գունդին բնակութեանը յատկացած շէնքին բացումը։ Բարեմաղթութիւններ եղան վասն կենաց Վեհ. Սուլթանին։

* * *

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, Եգիպտոսի արտասովոր պատուիրակ Ահմէտ Մուխթար փաշայի և Եգիպտոսի նախարարապետի փոխանորդ Ֆախրի փաշայի բնակարանները շաբաթ գիշեր լուսազարդուեր, հացկերոյթներ տրուեր և հանդէսներ կատարուեր են։

* * *

Դեղագործ Լեւոն էֆէնտի Կիւմիւշեան, հաստատեալ Աքսէրայ թաղին մէջ, շաբաթ օրը, Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ, ձրիաբար շինեց՝ իր դեղարանը ներկայացող աղքատաց դեղագիրները։ Նոյնպէս այդ օրը դեղարան դիմող աղքատ հիւանդներ ձրիաբար դարմանուեցան։

ԼՈՒՍԱՎԱՌՈՒԹԻՒՆՔ

Կ. Պոլսոյ համայն ժողովուրդը շքեղ լուսավառութիւններով ու ցնծութեան հանդէսներով տօնեց շաբաթ գիշեր Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձը։ Թէ՛ ցամաքի և թէ ծովու վրայ օրերէ ի վեր կը տեսնուէին անհամար պատրաստութիւններ, ամեն տարուան վրայ նորութիւն մը ու իրարու վրայ առաւելութիւն մը ունենալու համար. այս փոյթեռանդն մրցումը արտադրեց գիշերային այն հոյակապ տեսարանն, որ հմայիչ երեւոյթ մը կուտար օսմանեան գեղաշուք ոստանին, համակ լուսոյ մէջ ողողուած։

Միջօրէին, երբ թնդանօթի քսանըմէկ հարուածներ պաշտօնապէս աւետեցին գահակալութեան տարեդարձը, ամբողջ քաղաքը կազմ և պատրաստ էր արդէն՝ գիշերային լուսավառութեանց համար։

Ցերեկուան այդ ժամէն արդէն հոյակապ տեսարան մը պարզուած էր ամեն կողմ. ծովու վրայ, բոլոր մեծ ու պզտիկ օսմանեան ու օտար շոգենաւները դրօշակներով զարդարուած էին, և ցամաքի վրայ, բոլոր պաշտօնական ու հանրային շէնքերը, տեղացի ու օտարազգի ծանօթ անձանց բնակարանները, զօրանոցները, վաճառատուները, պահականոցները, դպրատուները, ամեն հաստատութիւն և ամեն շէնք՝ զարդարուած էր դրօշակներով, դափնիներով ու Վեհ. Սուլթանին ձօնեալ վերտառութիւններով։ Հրապարակներուն վրայ փառաւոր կամարներ բարձրացուած էին, ու արտասովոր ոգեւորութիւն մը կը նշմարուէր։

Գիշերուան առաջին ժամուն, երբ մութը սկսաւ տարածուիլ, անթիւ անհամար կանթեղներն սկսան վառուիլ ամեն կողմէ, այնպէս որ գրեթէ միեւնոյն ատեն, մոգական ձեռքէ մը լուսաւորուած ի պէս՝ ամբողջ Կ. Պոլիս փայլեցաւ ակնախտիղ փայլերով։

Լուսավառութեանց չքնաղագոյն կեդրոնը կը հանդիսանային Եըլտըզի կայս. պալատան հանդիպակաց հանրային երկու պարտէզներն, ուր ամեն մէկ ծառ լուսեղէն սիւն մը կը ձեւացնէր և ամէն անկիւն ճառագայթներու աղբիւր մը։ Լուսեղէն մեծագիր պատուանշաններ ու մահիկներ ձեւացուած էին և անընդհատ հրախաղութիւնք կը կատարուէին։ Զինուորական նուագածուաց խումբեր նուագչական գեղգեղիկ հատուածներ կը նուագէին։ Ժողովրդեան խուռն բազմութիւն մը համախմբուած էր այդ պարտէզներուն մէջ, ուր աննկարագրելի խանդավառութիւն կը տիրէր։

Պէշիկթաշի ու Նշան-Թաշի կողմը՝ Մեծ-Եպարքոսին, Սպարապետ փաշային և նախարարաց ու պալատական բարձրաստիճան պաշտօնատարաց ապարանքները լոյսերու մէջ կը ցոլային ու զիրար կը գերազանցէին անընդհատ հրախաղութիւններով։ Քաղաքապետ Րըտվան փաշայի ապարանքին առջեւ խրախճանութեանց կեդրոն մը դարձած էր. դուրսը՝ եւրոպական նուագածութիւն ու ներսը՝ արեւելեան, խուռն բազմութիւն համախմբուած էր լուսեղէն կամարներուն տակ, ուր սքանչելի հրախաղութիւնք կը կատարուէին և բոլոր բազմութիւնը կը մեծարուէր։

Նշան Թաշէն մինչեւ Ղալաթիա, մանաւորապէս Բանկալթի ու Բերա, լուսավառութեանց անընդհատ ու գեղատեսիլ շարք մը կ'ընծայէին և հազարաւոր ժողովրդեան բազմութիւն լեցուած էր չիտակ ճամբան։ Կալաթա Սէրայի առջեւ, ուր զինուորական նուագածուաց խումբ մը կը նուագէր՝ և հրախաղութիւնք կը կատարուէին, ճամբան անանցանելի ըլլալու աստիճան լեցուած էր բազմութեամբ։ Նոյն ոգեւորութիւնը կը շարունակուէր նաեւ ի Ղալաթիա և Թօփխանէ։ Բերայի Թրամուէյը մինչեւ կէս գիշեր երթեւեկեց անընդհատ։

Նոյնպէս լուսազարդուած էին Օսմ. Ապահովագրական Ընկերութեան գրասենեակն ի Ղալաթիա, և Տնօրէնին տունն ի Մօտա։

Պոլսոյ կողմը, կառավարական բոլոր պաշտօնատուները, նախարարաց ու մեծամեծաց ապարանքները չքնաղապէս լուսազարդուած էին. հոն ևս խրախճանութիւնք ու հրախաղութիւնք հրապարակներուն ու մեծ պողոտաներուն վրայ։ Լուսավառութիւններու նոյն փայլն ու շքեղութիւններն ունէին ի Գատըգիւղ, Կղզիները, և Այ-Սթէֆանոյէն մինչեւ Սիրքէճի լոյսի երկարածիգ գօտի մը կը ձեւանար։

Լոյսի անհուն և բեկբեկուն շարքեր կը սկսէին Ոսկեղջիւրի երկու եզերքներէն, Էյուպէն ու Խասգիւղէն, և կը շարունակէին հետզհետէ լայննալով, աւելի մեծավայելուչ երեւոյթ մը ստանալով։ Լոյսի այդ անընդհատ շարքերը ջուրի անսահման սաստկավառ հոսանքի հանգոյն՝ կը ծեփէին կը ծածկէին մէկ կողմէն Պոլսոյ եզերքը և միւս կողմէն, անհաման շարք, Բերան, Պէշիկթաշը, Օրթագիւղը և անկից մինչեւ Պէօյիւքտէրէ։ Հանդիպակաց եզերքը երրորդ շարք մը կը կազմէր, որուն տեսքն ալ ոչ նուազ հրապուրիչ և սխրագեղիկ էր։

Բայց ոչ մէկ կողմ այն հրապոյրն ունէր, զոր Վոսփորի երկու հոյատեսիլ եզերքները կը պարզէին եզականապէս։

Գլխաւորաբար, Պէպէք, Էմիրկեան, Եէնիքէօյ, Թարապիա, Պէօյիւքտէրէ և Մէսարպուրնու անանկարագրելի տեսարան մը կը պարզէին լուսավառութեան բազմապիսի հանգամանքով ու անհամեմատ գեղեցկութեամբ։

Ի Պէպէք, խտիվական ապարանքին ծովեզերեայ մասը հրաշալի տեսարան մը կ'ընծայէր իր լուսեղէն կամարներովը. նոյնպէս ապարանքին ետին և պարտէզին ու ապարանքին մէջտեղ գտնուած անցքը համախմբման կեդրոն մըն էր դարձած խուռն բազմութեան։ Մոհպուպ ու Սաֆօ էլ Պահր զբօսանաւերը լուսազարդուած էին վեց հազարէ աւելի ելեկտրական լապտերներով։

Թարապիա ու Պէօյիւքտէրէ, իրենց ճաշակաւոր լուսավառութիւններովը կը փայլէին. դեսպանատանց պահականաւերէն և ուրիշ շոգենաւերէ անընդհատ հրախաղութիւնք կը կատարուէին։ Այդ երկու ամարանոցներու քարափները լեցուած էին խուռն բազմութեամբ։

Ասիական եզերքը, ինքն ալ լուսավառութեան հրաշք մը ստեղծած էր, անընդհատ հրախաղութիւններով օդը լցնելով։

Վոսփորի և Ոսկեղջիւրի հոյակապման և միապաղաղ ջուրերուն վրայ կատարուած լուսավառութիւնք այլապէս հրապուրիչ էին։ Լուսափայլ նաւեր և անթիւ կայծեր շռայլօրէն ծեփուած սփռուած էին ամենուրեք։ Նաւահանգիստին մէջ խարսխեալ շոգենաւերն ակնահաճօրէն լուսավառուած էին, և վերին Վոսփորէն մինչեւ կամուրջ և անկից ալ մինչեւ Ոսկեղջիւրի ծայրը բազմաթիւ մակոյկներ ու նաւակներ անընդհատ կ'երթեւեկէին ծովուն ջինջ ջուրին վրայ, որ հրախաղութիւններու բիւրերփնեան փողփողումներուն մէջ սքանչելի կերպով կը պսպղար։ Գասըմ Փաշայի առջեւ կեցող օսմ. նաւատորմին զրահաւորներն, որոց կայմերն ու պարաններն ծածկուած էին գոյնզգոյն գեղեցիկ լապտերներով, խորհրդաւոր երեւոյթ մը կ'ընծայէին լուսափողփող տեսարանին։

Վոսփորի վրայ մասնաւոր հրապոյր մը կ'ընծայէին Շիրքէթի շոգենաւերը, որոնք ուղեւորներով լեցուած և չքեղապէս լուսազարդուած, կ'երթեւեկէին կամուրջէն Վոսփոր, նաւամատոյցներն հանդիպելով ու հրախաղութիւններ կատարելով։

Դիւթական գիշերուան մը երեւոյթը կ'ընծայէր ծովն համակ, Վոսփորն ու Մարմարան, իր վճիտ պայծառութեան վրայ աւելցունելով անհամար լոյսի փողփողումներու կրկնապատկերը։

Վերջապէս ծովու և ցամաքի վրայ, աննման էր տեսարանն, և ամենուրեք նոր հրապոյր մը, նոր գեղեցկութիւն մը կը պարզուէր, բնութեան ու արուեստին միացումէն յառաջ եկած։

Լուսավառութիւնք տեւեցին մինչեւ կէս գիշերէն մէկ ժամ յետոյ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.—Պալայի աստիճան տրուեցաւ Ծովային Նախարարութեան առաջին ճարտարապետ Վասիլաքի էֆէնտիի՝ Համազգային Անկելանոցին շինութեան առթիւ ըրած ջանքերուն ի վարձատրութիւն։

Առաջին կարգի Շէֆգաթ պատուանշան տրուեցաւ Ներքին գործոց նախարարութեան խորհրդական Ահմէտ Րէֆիգ պէյի աղջկան՝ Վամըգա հանըմի։

ՔՈՆԵԱՔ Ն. Ի ՊԱԹԻՍԹԱ Ի ՊԻՐԷՈՆ

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ
ՄՈՍՔԱՏ ԳԻՆԻՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ
ԱՄԵՆԷՆ ԶՈՒՏ ՔՈՆԵԱԿԸ
ՀԱՅԹԱՅԹԻՉ
Յունական եւ Եւրոպական բազմաթիւ հիւանդանոցներու
Մեծաքանակ առաքում բովանդակ Թուրքիոյ, Եգիպտոսի, Սուրիոյ, Ռումանիոյ, Սերպիոյ, Պուլկարիոյ, Ռուսիոյ, Ամերիկայի և Հնդկաստանի համար։

ՎԱՃԱՌԱՆԻՑ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ΣΥΜΒΟΛΟΝ ΚΑΤΑΣΤΗΜΑΤΟΣ
[illegible]

ՄԻԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ՔՈՆԵԱԿԻ
Պ. Ժ. ՊԱԹԻՍԹ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՊԻՐԷՈՆ
ՈՐ ՀՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆ ՈՒՆԻ
Հաստատեալ 1872 ին
Միակ ներկայացուցիչ Տ. Կ. Տիւրինատիս։ Կեդրոնական վաճառանոց, Ղալաթիա, Ցիւֆարի փողոց, թիւ 23. Մասնաճիւղ Բերա Քալյոնճի—Գուլլուք թիւ 9։

Արհեստից չքաշուած՝ յախճապակիի կայս. գործարանին գծագրիչներէն Մարտիրոս էֆէնտիի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՄՈՒՆՔ.— Օգոստոս 19 Թուականաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին ուղղեալ հեռագրեր ծանուցած են թէ Պէյրութի, Խարբերդի, Էնկիւրիի, Վանայ, Հալէպի, Պիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգաց մէջ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ։

* * *

Քաղաքապետութեան պաշտօնատան մէջ կազմեալ արկածելոց նպաստամատոյց յանձնաժողովը 1200 դրուշի նոր նպաստ մը ստացած է, որով նպաստներու գումարը հասած է 9,403,036 դրուշ 20 փարայի։

ՄԷՎԼՈՒՏ.— Պոլսոյ Դատաւորին մէկ վճռագրոյն համաձայն, որ մատուցուած է Վեհ. Սուլթանին, այս գիշեր պիտի տօնուի Մէվլուտը՝ ծնունդ Մարգարէին։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑ. — Վեհ. Սուլթանին հրամանաւ, լուսանկարիչ Ապտուլլահ եղբարք շաբաթ օրը լուսանկարեցին Համազգային Անկելանոցին ներքին ու արտաքին բոլոր մասերը։ Այդ լուսանկարներ Ալպոմի մը մէջ դրուելով պիտի մատուցուին յոտս կայսերական գահոյից։

—Անգլիական դեսպանին կինը՝ Լէտի Քըրրի հինգշաբթի օրն այցելեց Համազգային Անկելանոցին ամեն մասերը և գնահատելով այդ շէնքին կանոնաւորութիւնը գոհունակութիւն յայտնեց։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ.—Անգլիական այն լրատար շոգենաւը, որ անցեալները Սէլանիկի նաւահանգիստը հասած էր, երկաթուղիով Լոնտոնէ ժամանած թղթատարն առնելէ յետոյ ամսոյս 16ին Սէլանիկէն ճամբայ ելեր է միանալու անգլիական նաւատորմին, որ կը գտնուի Թաշօզ կղզւոյն առջեւ։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ.— Օգոստոս 12էն 18, մէկ շաբաթուան միջոցին, մայրաքաղաքիս ու արուարձանաց մէջ հետեւեալ թուով մահեր պատահած են

	այր	կին	գումար
Իսլամ	50	65	115
Քրիստոնեայ	38	21	59
Հրեայ	2	6	8
	90	92	182

ՄԱՔՍԱՑԻՆ վերատեսչութիւնն որոշած է գնել Ղալաթիոյ ծովեզերաց վրայ գտնուած շէնք մը, որ չորս հազար ոսկւոյ ի վաճառ հանուած է, և վերածել զայն ապրանքի մաքսատան։ Պետական Խորհուրդն ընդունելի դատելով Մաքսային վերատեսչութեան այդ որոշումը, ըստ այնմ տեղեկագրած է Բարձր. Մեծ-Եպարքոսին։

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑ գաւառին Տէֆթէրխանէի պաշտօնեայ կարգուած է Գարասիի գաւառին Տէֆթէրխանէի պաշտօնեայ Խօճէր Լուֆթի էֆէնտի. որուն յաջորդած է Երուսաղէմայ Տէֆթէրխանէի պաշտօնեայ Մէհմէտ Նուրի էֆէնտի։

ԽՈԼԵՐԱՆ Ի ԳԱՒԱՌՍ.—Օգոստոս 17 էն 18, Հալէպի մէջ խոլերայէ երեք դէպքեր պատահած են. Ուրֆայի մէջ չորս դէպք ու մէկ մահ։ Հալէպի մէջ օգոստոս 18 էն 19, խոլերայէ դէպք ու մահ չէ պատահած։ Օգոստոս 16 էն 17, Պիրէճիկի մէջ երեք դէպք ու երկու մահ։

—Տիարպէքիրի մէջ օգոստոս 18 էն 19, մէկ դէպք և առաջուան բռնուածներէն հինգ մահ։

ՀՈԼԱՆՏԱՅԻ Վիլհէլմին Թագուհւոյն ծննդեան տարեդարձին առթիւ, առջի օրը, ի բացակայութեան դեսպանին, գործակատար Պ. Քեօն և հոլանտական գաղթականութիւնը շնորհաւորական հեռագրեր ուղղեցին։

ԷՏԻՐՆԷԻ պահեստի զօրաբաժնին նորընտիր հրամանատար Ֆէրիգ Շէվքէթ փաշա երեք իրիկուան կառախումբով Էտիրնէ ուղեւորեցաւ։

ԷՐԶՐՈՒՄԷՆ կը գրեն թէ տեղւոյն երեւելիներէն Ապտիւլվահիտ փաշա մեռեր է 75 տարեկան։

—Խնուսի գայմագամ Զիհնի պէյ, որ սրտի հիւանդութեան ենթակայ ըլլալով Էրզրում գացած էր դարմանուելու համար, արկածի մը զոհ գացեր է։ Զիհնի պէյ իր պաշտօնէն հրաժարելով ամսոյս 5ին ընտանիօք ճամբայ ելեր է Կ. Պոլիս գալու համար. սակայն զիրենք տանող կառքը ժամբան գլորուածով շրջելով, թէև ընտանիքն անվնաս ազատուեր է, բայց Զիհնի պէյ կառքին տակ մնալով մեռեր է։

ԱՆՏԱՌԱՑ ու հանքաց ժողովոյ և հանքաց մասնագէտներու ժողովոյ առաջին քարտուղար Սարգիս էֆէնտի, կ'ըսէ Ստամպուլ, նոյն նախարարութեան կողմէ առժամաբար պաշտօնէ դադրեցուցեր է։

ՍԷԼԱՆԻԿԻ սերպիական հիւպատոսարանին առեւտրական գործակատար կարգուած էր Պ. Բարանօֆ։ Այս անուանման պատճառը սա է թէ սերպիական կառավարութիւնն որոշած է Սերպիաէն Եւրոպա ղրկուած ապրանքները, որք Աւստրիոյ ճամբով կը ղրկուէին, յետայսորիկ Սէլանիկի ճամբով ղրկել, որովհետեւ աւելի աժան պիտի ըլլայ։ Պ. Բարանօֆ պաշտօն ունի հսկել այդ գործողութեանց վրայ։

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ Միրճէա ու Էլիզապէթ շոգենաւերն երեկ առաւօտ Սեւ ծով ուղեւորեցան։

ԱՂՋԿԱՆՑ վարժապետանոցէն այս տարի տասնըմէկ աղջիկներ շրջանաւարտ եղած են։

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ սակացոյցերը բարեփոխելու ու զեղչելու համար եղած առաջարկը Պետական Խորհրդոյ կողմէ նկատողութեան առնուելով, որոշուած թէ առայժմ հարկ չկայ բարեփոխման ու զեղչման և թէ ապագային ըլլալիք փորձին համաձայն հարկ եղածն ի գործ դնելու պայմանաւ, պէտք է առաքումներն ու փոխադրութիւնները փութացնելու ջանալ։ Առ այդ տեղեկագիր մը պատրաստուելով մատուցուած է Բարձր. Մեծ-Եպարքոսին։

ԻԶՄԻՐԻ Առեւտրական Դորսաին վարչական ժողովը ընտրուած է հետեւեալ կերպով. Պ. Հէրպէրթ Րիճիօ՝ նախագահ, Պ. Բ. Գասապօղլու՝ գանձապետ և Հաճի Պէքիրզատէ Էմին էֆէնտի, Պ. Ալէքսի Թօբուզ, Իսմայիլ Ապէտին էֆէնտի ու Գազազեան Միրիճան էֆէնտի՝ անդամ։

ՎԱՆԱՑ նահանգին մէջ այս տարի մինչև հիմայ վարձակալութեան տրուած տասանորդի տրոց գումարն հասած է տասներկու հազար ոսկւոյ։ Անցեալ տարուան հետ բաղդատելով այս տարի հազար երկու հարիւր ոսկի աւելի եղած է։

ԵՐԿԱԹՈՒՂԻՔ. — Անատօլուի երկաթուղեաց ճարտարագէտներն, որք Աֆիոն Գարահիսար կը գտնուին, Ուշաք պիտի երթան։ Գիծերու զետեղումը աւարտած է մինչև Սաքըը՝ մերձ յ'Ալըքէնէր։ Այսօր կսկսի Աֆիոն Գարահիսարէն մինչև Ալըշէհր շինուելիք գծին շինութեան նուազուրդը։ Երկայնութիւնն է 250 քիլոմէդր, որ 21 մասի պիտի բաժնուի։ Շատ մը յանձնառուներ կը մրցին։ Ընկերութիւնն այժմ հարիւրին 30 պակաս կառաջարկէ այն գինէն, որով շինուած են առաջուան գիծերը։

—Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը սկզբամբ ընդունելի դատած է Մուտանիա-Պրուսայի գիծը Քէօթահիայի գծին միացնելու առաջարկն, զոր ըրած էր առաջնոյն ընկերութիւնը։

ԹԷՒԹՕՆԻԱՅԻ շէնքն, որ անցեալները այրեցաւ, պիտի վերաշինուի։ Ապահովագրական ընկերութեան վճարած չորս հազար ոսկին բաւական կը նկատուի շինութեան ծախուց։

«ԼԱ ԹՈՒՌՔԻ» խոշոր շոգենաւը մարտի սկիզբները Պոլսոյ նաւահանգիստը պիտի ժամնէ զբօսաշրջիկներով և չորս օրէն Մեսինա պիտի ուղեւորի։ Տոմսակի գիներն են, սրահներու համեմատ, 3600 էն մինչև 6100 ֆրանք։ Մինչև 250 ուղեւորներ պիտի ընդունի։

ԵՂԵՌՆԱԴԱՏ ատեանն երեկ կրկին անգամ դատեց զինուորական հանգստեան թօշակի սնտուկէն կատարուած գողութեան համար դատապարտուած անձերն, որոց նկատմամբ տրուած վճիռը բեկած էր Վճռաբեկ ատեանը։ Ասոնցմէ Տիմիթրի ու Իլիա դատապարտուեցան երեքական տարուան տաժանակիր աշխատութեան և Ցակոբ, Գէորգ ու Մատթէոս՝ մէկ մէկ տարուան բանտարկութեան. ատեանը որոշեց որ գողցուած դրամին կրկինը՝ 232,600 դրուշ 50 փարան գանձուի Տիմիթրիէն ու Իլիայէն և փախստական Անտօնէ ու Բէթրօէ։

ՈՃԻՐՔ. — Անցեալ գիշեր ոճիր մը գործուեցաւ Ճիպալիի մօտ։ Բերայի Թաղապետութեան քարտուղարներէն Սիւլէյման պէյ ու երկու ընկերները, որք Ֆէներէի գինետուններէ մէկէն կը դառնային, կռուի բռնուեցան։ Ասոնցմէ Քեամիլ անուն վաղեմի չարագործ մը դաշոյնով ծանրապէս վիրաւորեց Սիւլէյման պէյը, որ կրցաւ մինչև մօտակայ պահականոցը երթալ և անկից կեդրոնական բանտին հիւանդանոցը ղրկուեցաւ, ուր քիչ յետոյ մեռաւ։ Ոճրագործը ձերբակալուեցաւ։

—Թարապիաի շրջակայքը գտնուած Խաբալամպօս անուն մարդու մը ախոռին մէջ ուրբաթ օրը ոճիր մը գործուեցաւ։ Քամպէր անուն քիւրտ մը դաշոյնով վիրաւորեց Կավրիլ ու Թէօտօս անուն երկու օրթօտոքս լազ բեռնակիրներ՝ կռուի մը հետեւանօք։ Ոճրագործը ինքզինքը յանձնեց ոստիկանութեան և հարցաքննութենէ մը յետոյ Պէշիքթաշի ոստիկանատունը ղրկուեցաւ։ Վիրաւորներէն միայն մէկուն վիճակը վտանգաւոր է, իսկ միւսը թեթեւ վէրք մը ստացած է։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Վերջացող շաբթուն 3000 քիլէ կարծր ցորեն հասաւ և ծախուեցաւ 23—24 փարաէն օխան՝ Րումէլիի ու Էտիրնէի տեսակները։ 9000 քիլէ կակուղ ցորեն հասաւ զանազան տեղերէ և վաճառուեցաւ 13¼—14 դրուշի՝ Ղազարաի տեսակներն և 14—14¾ դրուշի Էտիրնէի տեսակները։ 4000 քիլէ Կիրքա ու Ազիմա հասան և ծախուեցաւ 13—13¼ դրուշի քիլէն։ 5000 քիլէ գարի ծախուեցաւ՝ տեղական սպառման համար՝ 8—8¼ դրուշի քիլէն։ 200, հազար օխա՝ Եւրոպաի համար օխան 18 փարաէն։

Եգիպտացորեն, հաճար ու վարսակ չվաճառուեցաւ, կարժեն 17, 14¼—14½ և 17¼—17½ փարա օխան։

Ալիւրներէն հասան՝ 11,000 պարկ՝ Իպրաիլ, 3500՝ Օտեսա, 1000՝ Վառնա և 400՝ Մարսիլիա, որք ծախուեցան ընթացիկ գիներով։ Թեփի վրայ ընթացիկ գործեր եղան 12—12½ փարաէն օխան։

Բնաւ գործ չեղաւ Լուբիաի, Բակլաի, սուսամի, կանեփի հունտի, խաշխաշի և կորեկի վրայ։ Կարժեն 100—135 դրուշ իւրաքանչիւր հարիւր օխան և 23½, 70—76, 45—48, 57—58 եւ 36—37 փարա օխան։ 300 պարկ սիսեռ ծախուեցաւ՝ տեղական սպառման համար՝ 50—55 էն եւ 1000 պարկ կտաւատ՝ Եւրոպաի համար 47—47½ փարաէն օխան։

Գալով արտածելի նիւթերուն, 246 պարկ դեղին ճէհրի ծախուեցաւ՝ Զօրում, Զիլէ հին հունձք, 62—70 փարաէն օխան։ 54 պարկ, որուն 27ը՝ Եօզղատ, սպիտակ, 21—22½ էն, 10ը՝ Նիկտէ, սպիտակ, սովորական 18½—19½էն, 5ը, Նիկտէ, նաթիւրէլ, 16¼—12 էն և 12՝ Նիկտէ, դեղին, 12—14 դրուշէն օխան։

Ալքօլներէն հասան 15 տակառ Ուլատօֆքա, 22 Քասամպա, 15 Ճիռաաղէլլի ու Սթէռն և 57 Թրիէսթէ, որք ծախուեցան 38—39, 41½—42½. 40½—41 և 41½—42½ օխան մէկ օսմանեան ոսկւոյ։

Գաղթաբերքերէն 1500 պարկ խահուէ հասաւ և ծախուեցաւ 11.50—13.50 օսմ. ոսկւոյ իւրաքանչիւր 100 օխան։ 3600 պարկ Թրիէսթէի շաքար հասաւ և ծախուեցաւ 86—92 դրուշի, ըստ մաքրին։ Ռուսական շաքար չծախուեցաւ, ուրկից 100 պարկ հասաւ. կ'արժէ 80 դրուշ։

2000 պարկ Ռանկունի բրինձ ծախուեցաւ 90 դրուշէն. ժամանեց 1000 պարկ։ 900 պարկ եգիպտական հասնելով վաճառուեցաւ 60—80 դրուշի։ 200 պարկ ճարոնական ծախուեցաւ, ուրկից 300 պարկ հասած էր, 145—150 դրուշէն. Ռիզոն չը հասաւ. պատրաստ գտնուածէն 200 պարկ ծախուեցաւ 43 ֆր.էն։

2000 սնտուկ մոմ, որուն կէսը՝ Ֆուտնիէ և կէսը՝ Ապօլլօն, հասան և ծախուեցան 57 և 54 դրուշի սնտուկը։ Պելճիական մոմ չհասաւ, ուրկից 1000 սնտուկ ծախուեցաւ 4.50 դրուշէն քիլօկրամը։

Ռուսական քարիւղի վրայ ընթացիկ գործեր եղան՝ սնտուկը 23 դրուշ ոսկեդրամ։

ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ

Այրի տիկին Զիմնակի, տէր և տնօրէն նախկին Թղթավաճառանոցին, վիմագրատան, տպագրատան և այլն, հիմնեալ 1860ին Ղալաթիա, Եօրկանճըլար փողոց, թիւ 63, ուզելով առուտուրէ քաշուիլ առողջական պատճառներով, կը թողու վաճառատունն ապրանքներու բոլոր մթերքովը, ինչպէս նաեւ վիմագրութեան ու տպագրութեան գործանոցը ուր կատարելագործեալ մեքենաներ կան, յոյժ նպաստաւոր պայմաններով, որք պիտի կարգադրուին երկուստեք համաձայնութեամբ։

Բոլոր անոնց համար որոնք կը ճանչնան պատուաւորութիւնն այս հին տան և այն դիրքը զոր միշտ գրաւած է Կ. Պոլսոյ հրապարակին վրայ, դժուար չէ հասկնալ թէ ներկայացած առիթը որքան աւ է։

Արդարեւ յայտնի է թէ Զիմնակի տան յաճախորդներն յոյժ բազմաթիւ են և գլխաւորապէս կը բաղկանան մեծ վարչութիւններէ, սեղանաւորական հաստատութիւններէ, առեւտրական կարեւոր տուներէ ևայլն։

Իսկապէս խնդիրն յոյժ բացառիկ կերպով նպաստաւոր գործի մը վրայ է, և մէկ հատիկ առիթ է լուրջ գնորդի մը համար։

Դիմել Թղթավաճառանոցը, այրի տիկին Զիմնակիի, Եօրկանճըլար փողոց, թիւ 63։ 6—8

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել հասարակութեան թէ այս օրուընէ հաստատուած եմ մայրաքաղաքի մէջ։

Ամենէն նոր եւ ամենէն կատարելագործեալ սարուածներով բժշկական աշխատանոցի մը միջոցաւ կրնամ ես ինքս կատարել բոլոր դեղագործական պատրաստութիւնները ինչպէս նաեւ ամեն տեսակ տարրալուծումներ։

Յուսալով որ կը հաճիք պատուել զիս ձեր վստահութեամբը, խնդրեմ ընդունեցէք յարգանացս հաւաստիքն։ Ժ. Ս. ՌԷՊՈՒԼ

Դեղագործ-բժշկագէտ առաջնակարգ
Բարիզի Էքօլ Սիւբէռիէօռէն
ՄԵԾ ԴԵՂԱՐԱՆ ՓԱՐԻԶԵԱՆ Մեծ փողոց, Բերա
406 ՍԻԹԷ ՌՈՒՄԷԼԻ Կ. ՊՈԼԻՍ 3—12

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, Օգոստ. 21/2 Սեպտ. 1895

Անուանական եւ	վճարեալ	Թուական	Անուանք Արժեթղթոց	Ընթացիկ Գիներ	
100		1831	Ընդ. Սէրի A 1%	65	—
100			» » B	44	20
100			» » C	30	10
100			» » D գոցուած	29	01
400			բացուած	29	03
100			միջօրէ	29	05
100		1870	Ռում. Եկթ. գոցուած	145	—
Ֆր. 500			բացուած	145	¾
Անկ.	Վճր.		միջօրէ	148	—
20	10	1890	Օսմանեան 4%	104	50
22	11	1869	Քրէտի Ժէն. Օթ.	11	10
10	5	1872	Օսս. Օթ. տը Շ. է Վ.	6	29
140	140	1878	Լաւրիօմ	51	50
500	300	1889	Անատոլուի (Բժթ. 5%	605	—
500	500		Երկաթուղիք (Պրթ.	315	—
20	8	1832	Թրամուէյ (Բժթ.	10	37
500	500		(Պրթ.	500	—
500	200	1883	Օսմ. Ռէժի	22	15
1.40	1.40	1892	Օսմ. Միկարէթ 6%	3	28
11	5½	1893	Օսմ. Ապահովագր. Ընկ.	7	55
500	500	1882	Ջրի Ընկ. Տէրքոս	456	—

ՍԹԻԼԱՆՑ (Բրիմ) ԴԻ ՎՐԱՅ	Օ. Ո.	Ղրշ.
8 օրուան համար 1000 հատի	3	25
1 ամսուան համար	5	—
1 օրուան համար	1	40
Ռէբոր	—	—
Կանխիկ (Հէվալէսից)	—	82½

ՍԹԻԼԱՆՑ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ՎՐԱՅ			
8 օրուան համար 25 հատի	Ֆր.	3	50
1 ամսուան համար	»	6	—
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ			
Անգլ. ոսկի Օ. Ո. 100 ղրշ.ն		110	14
20 Ֆրանքնոց		87	34
20 Մարքնոց (Գերմանական ոսկի)		107	20
Քրիմից		51	20
Ռուպլ Թղթադրամ		8	47
Մէճիտիյէ		108	16
Մանր արծաթ		103	—
Մէթալիք		98	20
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի		6	—

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ			
Լոնտոն 3 ամիս	Ղրշ.	109	32½
Փարիզ »	Ֆր.	23	02½
Վիեննա 8 օրուան	Ֆիոր.	11	02½
Պերլին չէք	Մարք.	18	55½

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ՓԱՐԻԶ 2 Սեպտեմբեր		
Քոնսոլիտ Օսմ. B Կնիք. Ֆր.	— —	—
» » C »	28	95
D (Բացուած »	26	40
(Գոցուած »	26	45
Ռումէլիի Երկաթուղի »	147	18
Բրիօրիթէ »	495	—
Մաքսային Պարտաթուղթ »	517	50
Օսմանիյէ »	481	25
Ռէժիի Բաժնեթուղթ »	510	—
Պանք Օթոման (անուանկն.) »	763	18
Ռանթ Ֆրանսական 3% »	102	12
» » 4½% »	107	05
» Իտալական »	89	90
Քրէտի Լիոնէ »	842	50
Քրէտի Ֆոնսիէ »	— —	—
Քոնդուառ տ'էսքոնթ »	— —	—
Սուէզի Բաժնեթուղթ »	3297	50
Եգիպտական Միացեալ »	— —	—
Չէք Լոնտոնի վրայ »	25	280
ՎԻԵՆՆԱ 2 Սեպտեմբեր		
Ռումէլիի Երկաթուղի Ֆիորին	78	10
Օսմ. Ռէժի »	241	70
Փոխանկ. Լոնտոնի վրայ ի տես	121	25
» Փարիզի »	47	90
ԼՈՆՏՈՆ 2 Սեպտեմբեր		
Քոնսոլիտ Օսմանեան A Ա. Ո.	66	—
» » B »	44	75
» » C »	28	37
D (Բացուած »	26	12
(Գոցուած »	26	18
Օսմ. Փոխ. 1891ի 4% (Երշխւրեալ.	— —	—
» » 1894 3½% (Եգպ. Հրկ.ով	— —	—
Պանք Օթոման (վճարեալ) »	20	12
Այտընի Երկաթուղի »	14	—
Միացեալ Եգիպտական »	104	87
Առանձնաշնորհեալ » »	— —	—
Անգլ. Քոնսոլիտէ »	108	06
Ռանթ Հելլենական 5% »	— —	—
» » 4% »	32	50
Պուլկար. Փոխառ. 6% »	95	50
» » Նոր 6% »	97	—
Փոխանկ. Փարիզի վրայ 3 ամիս	25	375
ՊԵՐԼԻՆ 2 Սեպտեմբեր		
Օսմ. Փոխառութիւն 1888ի Մարք.	99	30
Ռումէլիի Երկաթուղի »	89	60
Անատոլուի Երկթղ. ¼ Պրթղթ. »	95	—
Փոխանկ. Լոնտոնի վրայ 3 ամիս	20	390
» Փարիզի » 3 ամիս	80	75
Մակեդոնիոյ Երկաթուղի	— —	—

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՀԱՐՑ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱՅ
Ի Կ. ՊՈԼԻՍ, ԲԱՆԿԱԼԹԻ

Առաջիկայ սեպտեմբեր ամսոյ 1ին (Հ. Տ.) պիտի բացուի վարժարանիս 39րդ տարւոյն շրջանը. իսկ դասախօսութիւնք պիտի սկսին նոյն ամսոյն 4ին, երկուշաբթի օրը։ Վարժարանս՝ իր ութամեայ ուսումնական ընթացքին մէջ, կ'աւանդէ միջնակարգ վարժարանի յատուկ ամեն գիտութիւններն եւ յարմարելով տեղւոյս պահանջմանց ու պիտոյից՝ առանձինն մտադրութիւն կը նուիրէ ուսողական գիտութեանց եւ տոմարակալութեան։ Ուսմանց լեզուն փոփոխակի հայերէն եւ գաղղիերէն լեզուներն են։ Բայց ասոնցմէ պարտաւորիչ են նաեւ տաճկերէնն ու գերմաներէնը։ Վարժարանս կ'ընդունի ոչ միայն գիշերօթիկ այլ եւ կիսաթօշակ ու արտաքին աշակերտս։ Աւելի տեղեկութեան փափաքողն հաճի դիմել վարչութեանս, որուն հասցէն է՝ Վ. ՌԷԿՏՕՐ ՀԱՐՑ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱՅ Ի ԲԱՆԿԱԼԹԻ Կ. ՊՈԼՍՈՅ։ 394 4—10

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԵՐՃԵԱՆ

Տարերք աշխարհիկ լեզուի Ա. տարի 3 ղրուշ, Բ. 5, Գ. 5, % 25 զեղչ։ Կենսագրութիւն Պետրոս Դուրեանի, 5 ղրուշ։ Կը ծախուին Պոլսոյ գրավաճառաց քով։ 392 8—60

ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ցանձն կ'առնէ գաւառացի տղաքը Պոլսոյ վարժարանաց մէջ ընդունել տալու համար ուսանողաց ծնողներուն կողմէ բանակցիլ Տեսչութեանց հետ, ընդունելութեան պայմանները ճշդել, Պոլսոյ մէջ աշակերտաց ծնողներուն ներկայացուցիչն ըլլալ, եւ ամեն դիւրութիւն ու աջակցութիւն ընծայել պանդուխտ ուսանողներուն։

Դիմել առ ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ
Թիւ 11, Դագասկէր խան, Պահճէ գափու, Կ. Պոլիս։
318 6—6

ԾԱՂԿԱՐԱՆ—ՇԱՔԱՐԱՏՈՒՆ
"Օ ՔԱՄԵԼԻԱ"
ՂԱԼԱԹԻԱ, ԵՒՐՔՍԷՔ-ՔԱԼՏԸՐԸՄ ՓՈՂՈՑ
ԹՐԱՄՈՒԷՅԻ ԿԱՅԱՐԱՆԻՆ ՄՕՏ ԹԻՒ 105

Պ. Պ. Ա. Նօ իրօ եւ Ա. Քալլիօտիս պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ նոր ծաղկարան մը եւ շաքարատուն մը (ԲԱԴԻՍԸՐԻ—ՔԱՆՖԻՍԸՐԻ) մը հաստատած են

Օ ՔԱՄԵԼԻԱ

անուամբ։ Եւրոպիոյ յառաջնոյն շաքարատուներէն եկած շաքարներ, հարսնիքի եւ կնունքի պիտոյք ինչպէս մոմ, պսակ եւ լն պիտոյք երեխայներու համար։ Ցանձնարարութիւնք արագ ու փութով կը կատարուին. Իրենց հաստատութիւնը յանձնարարելի է նիւթերու լաւ ճաշակովն ու գիներու համեմատութեամբը։

Տէրերը կը յուսան ուրեմն թէ պիտի քաջալերուին հասարակութենէն։
363 7—13

Օ ՋՕԼԻՎԻԷ Տ'ՕՐԻԱՆ
ՄԻՀՐԱՆ, ՄԿՐՏԻՉ ԵՒ ԸՆԿԵՐՔ
ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ, ԸՆՏԻՐ ՆՈՐԱՐԵՂԻՆԱՑ
Միւշկիւլէի ճշմարիտ սապրակի Ջէբր Գին 7½
19. Ղալաթա, Օսմ. Պանքայի կից, Մէտրէսէ փողոց. 19

Ուղիղ կշիռ, չափաւոր գին, ապրանքները կը ղրկուին, քաղաք թէ գիւղ, մինչեւ տուն։
Վճարմանց դիւրութիւն 333

ԱԿՆԱԲՈՅԺ
ՀՆԴԻԿ ՆԷՎԱՊ ԱԼԻ ԽԱՆ

Նշանաւոր ակնաբոյժ հնդիկ Նէվապ Ալի Խան երկար ատեն յաջողութեամբ ի գործ դրած է այդ արուեստը։ Սամսոն ու օսմանեան ուրիշ գաւառներու մէջ գտնուած եւ մանաւանդ Գուշ ատայի մէջ քսանըհինգ տարուան կոյրի մը աչքերը բացած է։ Նէվապ Ալի խան այս անգամ մայրաքաղաքս եկած եւ հաստատուած է Ղալաթիոյ աշտարակին հանդէպ՝ անկիւնը գտնուած քարուկիր տան երրորդ յարկը, ուր ամեն օր ժամ 1էն 8, կընդունի հիւանդները. չորեքշաբթի օրերը ժամ 1էն 5, ձրի կը դարմանէ։ 364 17—30

A LA SORBONNE DE PARIS
ԿԱԶԱՑԻՆ ԸՄՊԵԼԵԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ
ՂԱԼԹԻԱ, ՔԱՐԱՕԼԱՆ ՓՈՂՈՑ, 17

Պ. Լ. Շօր, տէրն այս գործարանին, պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ այսուհետեւ կազային ըմպելիները իր գործարանին մէջ պիտի պատրաստուին զտուած ջուրով, գերմանացի հռչակաւոր բրոֆէսորին դրութեան համեմատ։ Հասարակութիւնը կը հրաւիրուի օգուտ քաղել այս նորութենէն։

Լ. Շօր կազէօզները կը գտնուին ի Բերա-Բալլաս, Սըլանիկ Քաֆէ, ի Բաթիսըռի Ֆրանսէզ, Բաքքիր քով եւ այլն։ Տուն ալ կը ղրկուի։ 320 19—26

ՍԻՆՕՐԻ ՄՕՌԻԻ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Եըլտըզ, Կ. Պոլիս, 13 դեկտ. 1888

Պարոնայք Սքօթ եւ Պօուն,

Կը ցաւիմ որ պաշտօնական դիրքովս կարող եմ փորձեր ընել, այլ համաձայն ուրիշներուն փորձերուն եւ այն բժշկաց որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ, կը յայտարարեմ որ ձեր Մօրիւ ձկան իւղն իր այդ վիճակին մէջ գլիսրաւ խառնելով եւ մարսուելով, կը համապատասխանէ այն յատկութեանց զորս ախտաբուժական գիտութիւնն ի վաղուց անտի ուշակած է, մասնաւորապէս այդ յաջող պատրաստութեան մէջ։ ՏՐ. Ա. Ս. ՄԱՎՐՈՅԷՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վեհ. Սուլթանին

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈԼԷՃ
Ցնօրէնութեամբ Պ. Պ. Ֆօռի
Քումպարաճի փողոց

Ցայտագիր Ֆրանսայի Լիսէներու։ Կատարեալ ուսուցում յունարէնի եւ թուրքերէնի։ Վարժարանը կ'ընդունի ցորեկօթիկներ, կէս գիշերօթիկներ ու գիշերօթիկներ։
Դպրոցը պիտի բացուի սեպտեմբեր 11/23ին։
401 3—20

ՏՈՔԹ. Գ. ՇԷՐԻԹՃԻ

այս անգամ իր բնակութիւնը Մազրիգիւղ, Մուհասէպէճի փողոց (Իւկէլէ ճատտէ) թիւ 35 տունն հաստատած ըլլալով, հիւանդ կ'ընդունի ամեն օր ժամ 7—10 (Ը. Թ.) իր բնակարանին մէջ. կը դարմանէ ամեն տեսակ ներքին եւ արտաքին հիւանդութիւններ. չորեքշաբթի օրերը ձրի։
377 15—20

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսաի շահանէճէ ալընաճագ գահվէնին գարարը գաթիի իշալու աղուսթօսըն 23իւնճիւ չարշանպէհ կիւնիւ վիլլէճէէկինտէն իմթայա թալիպ օլանլարըն եէվմը մէզքիւրտէ սաաթ 6տան նիհայեէթ 9ա գատար Խազինէի ճէլիլէի միւշարիլէյհայա կէլմէլէրի իլան օլունուր։

17 աղուսթօս 311 3—3

ԻԼԱՆ

12 ատէտ խսմ գաթ թիմուր բէնճիրէ գանատլարը, պէհէր գըհէյի աթիգի 2 ղրշ. 9 ատէտ իքիչէր օլմագ իւզրէ պօտուրում գաթը բէնճիրէ գանատլարը. պէհէր գըհէյի աթիգի 2 ղրշ. 20 փարա, 6 ատէտ թիմուր գարու գանատլարը, պէհէր գըհէյի աթիգի 3.20։ Նուրը Օսմանիյէտէ ուսթա Խաչիկ էօհտէսինտէ։

12 ատէտ պէօյիւք գըթատա խսմ գաթ բէնճիրէ չէրչիվէսի ախշապ, պէհէր ատէտի 76 ղրշ, 2 ատէտ օրթա գըթատա աշաղը գաթ բէնճիրէ չէրչիվէսի ախշապ, պէհէր ատէտի 70 ղրշ., 7 ատէտ քիւչիւք գըթատա պօտուրում գաթը բէնճիրէ չէրչիվէսի ախշապ, 24 ղրշ.։ Նուրը Օսմանիյէտէ տօղրամաճը Սիմօն ուսթա էօհտէսինտէ։

Թիճարէթ վէ Նաֆաա նէզարէթը տաշրէսի պաղչէսինտէ ինչասընա տէվամ օլունմագտա պուլունան էվրագ մահզէնի մալէզմէսի ճիւմլէսինտէն պուլունան մաիլմը էլ ատէտ 3 ճինս ախշապ բէնճիրէ չէրչիվէսի իլէ քէզալիք ահըն բէնճիրէ վէ գապու գանատլարընըն մէսարիֆ իմալիյէսի իլէ նագլիյէ վէ վազիյէսի թալիպինէ այտ օլմագ չարթըլէ թալիպլէրի էօհտէսինտէ թէգարրիւր իտուպ մահը հալը րումինին 24իւնճիւ բէնշէնպիհ կիւնիւ սաաթ 10տա գարարը գաթիսի վիրիլէճէէկինտէն պունտան տահա աշաղը ֆիյաթ իլէ իմալինէ թալիպ օլանլարըն փէյ աքչէլէրինի մուսթասհապէն եէվմը մէզքիւրտէ նէզարէթը միւշարիլէյհա ինչաաթը գոմիսիօնունա միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

19 աղուսթօս 311

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Իսքիւտարտա Թօփխանէլի Օղլու ժանտարմա գարագօլխանէսի քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 2800 ղրշ., Սթամպօլտա Մահմուտ Փաշա եօգուշընտա ժանտարմա գարագօլխանէսի քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 1500 ղրշ., Խասքէօյտէ ժանտարմա գարագօլխանէսի քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 1700 ղրշ., Սահրայի ճէտիտտէ ժանտարմա գարագօլխանէսի քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 5000 ղրշ., Սամաթիատա Պէլգրատ ժանտարմա գարագօլխանէսի քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 550 ղրշ., Պէյօղլընտա ժանտարմա գօղուշընըն քէշֆի միւճիպինճէ մագթուէն պէտէլը թամիրաթը 4.5 ղրշ., Գուրուչէշմէ ժանտարմա գարագօլխանէսինին բըխթըմը քէշֆի միւճիպինճէ 4600 ղրշ.։

Էնվայը մալինտան վէ իշճիլիկի իլէ պէրապէր թամիրաթը մագթուէն ինհալէ օլունաճագ ժանտարմա գարագօլխանէլէրինին էնտէ էլ միւնագասա պալանտէքի պէտէլաթ իլէ թալիպլէրի էօհտէլէրինտէ թէգարրիւր իթտիկինտէն վէ աղուսթօսըն 2 իւնճիւ բէնշէնպիհ կիւնիւ իհալէի գաթ'իյէլէրի իճրա օլունաճաղընտան թէնզիլէ թալիպ օլանլարըն 100տէ 20 թէմինաթը աքչէլէրի իլէ մաէն ինչաաթը աքերիեէ տայիրէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

Նօ. 58 1—3

Նիզամիէ էրզագ անպարը իչուն միւպայեա օլունաճագ օլան 1000 զըհէ գէյթունըն իթմասընա թալիպ օլանլարըն մազամը Սէրասքէրի լէվազըմաթը ուամումիէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

Նօ. 57 3—3

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. Ոսկի 1,000,000

ՖԻՆԻՔՍ

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ աւելի քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրքն են՝ անհուն անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 326

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոց, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Ղալաթիա, Պանք Օթոմանի վարի քովը ի Վիթալիս խան, գետնայարկ Թիւ 1։

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԵԱԼ ԸՍՏ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻՆ

1892 ՕԳՈՍՏՈՍ 2/14ԻՆ 20 ՍԷՖԷՐ 1340

Ապահովագրութիւնք ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ, ԿԵՆԱՑ ԵՒ ԱՅԼ ԱՄԵՆԱՅՆ ՎՆԱՍՈՒՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ, Կ. ՊՈԼԻՍ ԵԷՆԻ ԽԱՆ, ՔԱՐԱՔԷՕՅ, ՂԱԼԱԹԻԱ 28

ՍԻՐՈ ՏԸ ՌԷՖՕՐ ԻՕՏԷ
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ.
SIROP de RAIFORT IODÉ

Բժիշկներու կողմէ յանձնարարուած՝ Սիրոյ Անթիսքորպիւթիքի և Մօռիւ ձկան իւղին տեղ՝ աւելի արդիւնաւորութեամբ, տղոց ու տկարակազմ տղայոց մորթի փշտիկներուն դէմ. ինչպէս նաեւ վիզի գնդիկները հալեցնելու և ախորժակը բանալու համար։
Փարիզ, 8, Վիվիէն փողոց
և բոլոր դեղարանաց մէջ A.

Les Seules purgeant sans Coliques
PILULES SAVONNEUSES BOISSY
LAXATIVES
PURGATIVES
RAFRAICHISSANTES
La Boîte de 40 Pilules : 2 fr. franco.
Phie BOISSY, 2, Place, Vendôme, PARIS

ՊՈՒԱՍԻԻ ՕՃԱՌԱՅԻՆ ԴԵՂԱՀԱՏԵՐԸ

միակ լուծողականներն առանց խիթի բուժում գլխացաւերու, ջղացաւերու, պնդութեան, աղեաց անուժութեան եւ այլն...

Կը գտնուի ի Կ. Պոլիս, դեղագործ Բանցիկլի քով, Բերա, Մեծ-Փողոց, 249 370

ՊԱԶԱՐ ՌՈՒՍ

Ալեքսէյ Պէյլոս և Ընկ.
447, Բերա Մեծ-Փողոց, 451
(ռուսական դեսպանատան քով)
մասնաւորապէս կը գտնուին՝

Սեւ խաւեար ընտրելագոյն.—Զորցած, աղած և համեմուած ձուկեր—Թառմ, մարմար կարագ—Պանիրներ—Երշիկներ—Ժամպոն—Լեզուներ—Ֆիլէթօ—Համեմուած վաբունգ—Հաճարի հաց—Պաքսիմատ—Պիսքիւի—Անուշեղէն—Թէյ։
Մեծ պէտղէտաբեէն պահածոյ ռուսեւէտ վոտկա և ռուսական առաջնակարգ ըմպելիք

Որոշ գին

Ծան.—Պազար Ռիւսը շաբաթն երկու անգամ կանոնաւորապէս ապրանք կ'ընդունի։ 210

[illegible] (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ամէն տասն օրը մէկ անգամ կը բանին Լիվըրբուլի և Ալեքսանտրիոյ միջեւ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնօ
Ումպրիա	7718	Պօթնիա	4531
Էդրուրիա	7718	Սամարիա	3574
Սերվիա	7391	Մարաթոն	2403
Աւրանիա	7268	Ալպօ	2393
Բավոնիա	5587	Սարակոսա	2166
Սեֆալոնիա	5517	Թարիֆա	2246
Կալլիա	4809	Բալմիրա	2144
Սիթիա	4557	Թրինիտատ	1899
Ալէրմօ	2143	Մորօքքօ	1855
Քէսար	1876	Քամբանիա	12950
Շերպուրկ	1614	Լուքանիա	12950
Գադալոնիա	4845		

Թրինիտատ շոգենաւը, նաւապետ Հիլ, Լիվըրբուլէն հոս պիտի հասնի ընդհանուր վաճառքով զէպ ի սեպտ. 6։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակատար
Thomas C. Joly
Ալիքսիւտուիս խան, Թիւ 401
Ղալաթիա 335

ՄՈՍ
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվըրբուլէ, Պօրտօյէ, Միջերկրական և Սեւ Ծովի միջեւ բանող

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ռամսէս	3000	Թիպս	2500
Անուպիս	3000	Նէֆթիս	2400
Թէպաըր	3000	Օսայրիս	2250
Քեանոբուս	3000	Բէրա	2250
Ֆարոս	3000	Սֆինքս	2000
Օսմանլը	3000	Կասքրնի	1500
Մարիօթիս	2500	Կիւյէն	1500

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ռէյթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
330 31, Ճէյմս Սդրիդ Լիվըրբուլ

ՏՐՔ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
Հաստատեալ 1852 ԱՆԿԼՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Հաստատեալ 1852
Թիւ 396 ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԲԵՐԱ

Մասնագէտ առանց քաշուելու լինելոյ արհեստական ակռաներ պատրաստելու, մէկ անգամէն ամենաստորին ցաւած ակռաները, ոսկի ադամանդ և մետաղով լեցնելու, ինչպէս նաեւ կը դարմանեն բերնի և ակռայի ամեն կերպ ախտերն և կը քաշեն առանց ցաւ զգցնելու (Բացի կիրակիէ) ամեն օր առաւօտէն մինչեւ կէս օր։ 38

ՖԵՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց
Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան
ոսկեայ շքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդիսին մէջ.

Դասն տարւոյն յաջողութիւն յԻտալիա, յԱմերիկա, ի Հնդկաստան, յԱրեւելս և յԵգիպտոս.—Շքադրամ 1885ի Անվերսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլպուրնի և Պրուքսէլի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 1873ի Վիէննայի մի ջապխային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԵՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ ըմպելին է։—Շատ բժիշկներ կը յանձնարարեն իբր զգուշական դարմանական ճահճային երկիրներու տենդերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԵՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ կը զօրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ ըմպելիներէն և ամէններէն գերազանց, կ'առնուի ամեն օր ճաշէն առաջ իբր ախորժաբեր. ճաշէն յետոյ, ազդու մարսողական է։ Կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, սելթզի ջրոյ և խահուէի հետ.

ՖԵՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր անուշարարաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՖՈՆԹԻ և ՐԷՖՖԻՍ 2218

SANTAL SALOLÉ LACROIX

ԳԱԲՍԻՒԼՆԵՐԸ

Միզային գործարանի հիւանդութեանց դէմ գործածուող հականեխիչ դեղերուն ամէնէն ազդուն և ամենալաւ խրացնելին է։
Վաճառատեղին՝ դեղարան Լագռուա, 7ի, Շաթօտօ փողոց. Բարիզ.

Կը գտնուի բոլոր դեղարաններու մէջ։

EMULSION SCOTT

(ՍԿՈԴԻ ՕՃԱՌԱԿ)
ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԴԱՒԱՑ ԻՒՂ
Հիփոֆոսֆիթ տը շօ և սոտայով
Պատրաստեալ ձեռամբ ՍԿՈԴԻ և ԲՕՈՒՆԻ,
ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորուի ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիփոֆոսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճողածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղարանաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԱՒՐԵԼ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ և ՄԱՐՈՔԵԱՆ
Ն. ԲԱՔԻ և Ընկ
Մարսիլիայի և Պաթումի միջեւ
կանոնաւորապէս բանող

Մէնկրէլի շոգենաւը Պաթում պիտի ուղեւորի հանդիպելով Սամսոն, Կիրասոն և Տրապիզոն Սեպտ. 4ին իրիկուան ժամ 4ին (Ը. Ե.)։

Ասպենի շոգենաւը ուղղակի Մարսիլիա պիտի ուղեւորի Սեպտ. 10ին (Ը. Ե.)։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնելով,
Ա. կարգ 245 ֆրանք
Բ. „ 175 „

[illegible] ուղեւորութիւն

Նաւավճարի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Դիմելու գործակատար
ԹԻՄՈԹԷ ՐԸԳՈՒԼ
133 Մասմէնէ փողոց Թ. 108

COMP. RUSSE
DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE
ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ
ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Շաբթուան երթեւեկութիւնք

Մշ. 21/2 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։
Գշ. 22/3 Աղեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակը ժամ 5ին յետ միջօրէի, Պիրէոսի ճամբով
Դշ. 23/4 Սեվաստաբոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
Դշ. 23/4 Սուրհանդակ դէպի Փոքր-Ասիոյ նաւահանգիստները մինչեւ Պաթում, առաւօտեան ժամը 11ին։
Եշ. 24/5 Օտէսայի սուրհանդակ, ժամը 2ին յետ միջօրէի։
Ուր. 25/6 Աղեքսանդրիոյ Սուրհանդակ, հանդիպելով Սուրիոյ նաւահանգիստները երկու շաբաթը անգամ մը ժամը 4ին։

ԱԶԴ.— Օգոստ. 22/3, երեքշաբթի օրը Կ. Պոլսէն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող գծեւոր Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիփոլի, Պէյրութ, Եաֆա եւ Բոր-Սայիտ զատող շոգենաւին 263

HAMBURG MUNICH UNITED
ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ
ՄԻԱՑԵԱԼ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆռանք 8,000,000
Պահեստիդրամ	10,028,000
Տարեկան հասոյթ	23,250,000

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

894 Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ
ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անաստասիս խան. 12, 13, 1

ՀԻՆ ՊՐԱՆՏԻ

Ժ. Ֆ. ՄԱԿՆԱՄԱՐԱ

ՔՕՆԵԱՔ
ՇԱՐԱՆԹ ՖՐԱՆՍ
ԱՄԷՆ ՏԵՂ ԿԸ ԾԱԽՈՒԻ
340

ԱՐԵԱՆ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ
APPAUVRISSEMENT DU SANG

Անարիւնութիւնը, քլորոզը, ստամոքսի հիւանդութիւնները, սպիտակ դաշտանները արագօրէն աղէկնալու համար բաւական է երկաթի և ֆոսֆատի պէտք ունին, որոնք միացած կը գտնուին ԼԸՐԱՍ ՖՈՍՖԱՏ ՏԸ ՖԷՐԻՆ մէջ, յոյժ յանձնարարելի փափկակազմ, անախորժակ տղոց և զօրաւոր զարգացած աղջիկներու համար։
8, Վիվիէն փողոց, Փարիզ
և բոլոր դեղարանները A.

VICHY
Միակ ճշմարիտ բաստղիլները
ՎԻՇԻԻ
ԵՆ
PASTILLES VICHY-ETAT
Որ մետաղեայ կնքուած տուփերով կը ծախուին
ՊԱՀԱՆՋԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՔԱՆ









ԷՔՍԲՕՌ ՎԷՌՊԱՆՏ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ
ԱՐՏԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,
Կ. ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԱԿ

Ցուցադրութիւն մեքենաներու եւ գերմանական ճարտարագործութեան այլ նիւթերուն Ղալաթիա, Բէրքէմալէ Բազար եւ Մէհքէմէ փողոց, Թիճարէթ խան [Նախկին կեդրոնատեղի Ռէժիի]

Մեծ մթերք զանազան մեքենաներու, որք են՝ շոգեշարժ մեքենայք, կազով ու բարիւղով շարժող մեքենայք, որոց մին շարժման կը դրուի եթէ յաճախորդն ուզէ։ Պարզ քարիւղի լամբարը մէկ ժամուան մէջ 0.4 քիլոկրամ կը սպառէ, այսինքն ժամը 15էն 20 փարայի։ Կը գտնուին նաեւ ճախարակներ, ծակող մեքենաներ, բերան բացող մեքենաներ, երկաթաթիթեղէ եւ թանձրաքարտէ թիթեղահատներ, թիթեղագործութեան, ղարբնութեան, կազմարարութեան, ատաղձագործութեան մեքենաներ, ջրհաններ, հերկագործական մեքենաներ, շաղախ, գերմանական երկաթէ գերանիկներ, ասֆալտ, խայծղանաւոր քարգոն, խոհանոցի անօթք, կազի լամբարներ, ճեմիշի կազմածք, պիսիքլէդ, կարի մեքենայ, եւն. եւն.

Մասնաճիւղք
ԱԹԷՆՔ, Սոֆոկլէս փողոց, 11 [նախկին Պանք Աթէնքի]

[illegible]
ՍԵԼԱՆԻԿ, Թոփհանէ ալթը, ՊԻՐԷՕՍ, Բլիւտոն փող.

Գործակալութիւնք
ՍԵԼԱՆԻԿ ԻԶՄԻՐ | ՄԵՐՍԻՆ ՀԱԼԷՊ | ՊԷՐՈՒԹ ԴԱՄԱՍԿՈՍ | ՔԱՅՖԱ ԵԱՖԱ

Բորֆուզ, Զանգա, Բազրաս, Բալամազա, Շիրա, Վոլօ, Աղեքսանդրիա, Գաճիրլ։ 360











ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Երթեւեկութիւն Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտէսայի միջեւ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Բաէտէր	1700
Արօլլօ	5500	Կիդանօ	2200	Բլաթօ	1500
Արկօ	2300	Կօզօ	1800	Բօլօ	1000
Արիօսդօ	3000	Կրոտնօ	2200	Քուիրօ	2800
Պասսանօ	3000	Հիրօ	2000	Րիալդօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3000	Րինալտօ	3200
Պրավօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Համպէր	1200	Րօմէօ	3500
Տէյրօ	2600	Այտօ	5000	Րօզարիօ	3500
Տալմաս	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլսօ	2000	Սանդիակօ	8200
Գազօ	2000	Քօլբինօ	4200	Սաքֆօ	2000
Գօմօ	2700	Քօվնօ	2200	Սիլվիօ	2000
Չիքագօ	5000	Լէօ	2000	Սօրէնդօ	4300
Գիլօ	5500	Լէբանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլօրատօ	3400	Լիվօրնօ	3000	Թուրսօ	1200
Ֆիգօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրքիտօ	900
Տուրօ	1800	Մարզէլլօ	6500	Ուրպինօ	5000
Սրաֆօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էրմինամօ	2600	Մուրինօ	3100	Եէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նէրօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տիֆֆայնըն	200
Սփաթօ	2600	Օթէլլօ	5000	Ճրմպօ	200
Ֆալքօն	800	Օբօրտօ	4500	Զէրօ	110
Ֆրանօ	700	Օգրօ	2000	Մօսքիթօ	120

Էճիպշըն Մօնարք 8000 Բերժըըն Մօնարք 8000
Լըզիըն Մօնարք 8100

Ուրալէնօ շոգենաւը, նաւապետ Քըր, ընդհանուր վաճառքով այժմ կը բեռնաւորի ի Հըլ և ամսոյս 30ին պիտի մեկնի ուղղակի Պոլիս գալու համար։

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւն կընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒՍՕ
Գործակալք
Թիւ 17—18, Քիւչիւք Միլէթ
332 խան, Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ